

«ՄԻԼ ԳԱԶ» ՍՊԸ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ, ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ, ԶՈՎՔ
ԳՅՈՒՂԻ ԳԼԽԱՎՈՐ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 25 ՀՈՂԱՄԱՍ
ՀԱՍՑԵՈՒՄ ԱՎՏՈԳԱԶԱԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ
ԲԱԶՄԱՎԱՌԵԼԻՔԱՅԻՆ ԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ

Տնօրեն՝

Թ.Միլիտոսյան

Կատարող՝ // Լ. Գրիգորյան

Երևան - 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	4
1.1 Տեղեկություններ ձեռնարկողի մասին	4
1. 2 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը	4
1. 3 Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը	6
1. 4 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)	9
1. 4. 1 Նախատեսվող գործունեության նկարագիրը	9
1. 4. 2 Կանաչապատման և բարեկարգման աշխատանքներ	25
1. 4. 3 Հողային աշխատանքներ. շինտեխնիկա	25
1. 4. 4 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում	29
1. 4. 5 Գազալցակայանի տեխնիկական բնութագրերը	30
1.4.6 Տեխնոլոգիական գործընթացի համառոտ նկարագիրը	31
1. 4. 7 Ջրային ռեսուրսների պահպանություն	32
1. 4. 8 Ջրամատակարարում և կոյուղի	32
2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ	33
2. 1 Ֆիզիկաաշխարհագրական պայմանները	33
2. 2 Համայնքի կլիմայական պայմանները	34
2. 3 Տարածքի ինժեներա-երկրաբանական, հիդրոերկրաբանական պայմանները	37
2.4 Տարածքի սեյսմիկ բնութագիրը	39
2. 5 Հողային ռեսուրսներ	39
2. 6 Օդային ավազան	40
2. 7 Ջրային ռեսուրսներ	43
2. 8 Բուսական և կենդանական աշխարհ	44
3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	47
3. 1 Ռիսկերի գնահատում	47
3. 2 Արտանետումների աղբյուրները	48
3. 3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագիրը	48
3. 3. 1 Մթնոլորտային օդ	48
3. 3. 2 Ջրային ռեսուրսներ	48
3. 3. 3 Հողային ռեսուրսներ	49
3.3.4 Թափոնների առաջացում և կառավարում	49
3. 3. 5 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը	50

<i>3. 3. 6 Աշխատանքի անվտանգություն և առողջություն</i>	<i>52</i>
<i>3. 3. 7 Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների դեպքում արտանետումների կարգավորմանը ուղղված միջոցառումներ.....</i>	<i>52</i>
<i>3.3.8 Հակահրդեհային միջոցառումներ</i>	<i>53</i>
<i>3.3.9 Աղմուկի և թրթռումների ազդեցություն</i>	<i>53</i>
<i>3.3.10 Բուսական աշխարհի պահպանության միջոցառումներ.....</i>	<i>54</i>
<i>3.3.11 Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ.....</i>	<i>55</i>
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	
56	
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ/ ՊԼԱՆ	59
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ _____	61
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ-	59

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Տեղեկություններ ձեռնարկողի մասին

Նախատեսվող գործունեություն	ՀՀ մարզ Կոտայք, Ջրվեժ համայնք, գյուղ Զովք Գլխավոր խճուղի թիվ 25 հողամաս հասցեում ավտոգազալիցքավորման բազմավառելիքային կայանի կառուցում
Նպատակը	Ավտոգազալիցքավորման բազմավառելիքային կայանի կառուցում
Նախագծի պատվիրատու	«Միլ Գազ» ՍՊԸ
Ձեռնարկող	«Միլ Գազ» ՍՊԸ
Ձեռնարկողի հասցե	Ք. Երևան, Մոլդովական 43
Ձեռնարկողի կոնտակտային տվյալներ, էլ փոստ, հեռախոս	Հեռ. 096010611
Նախատեսվող գործունեության վարչական տարածքը	ՀՀ Կոտայքի մարզ, Ջրվեժ համայնք, գյուղ Զովք
Կառուցապատվող հողամասի մակերեսը	4328մ ²

1. 2 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, բնության, շրջակա միջավայրի և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ գնահատումը: Գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը պետք է ներառի շրջակա միջավայրի բաղադրիչների /հող, ջուր, օդ, կենսաբազմազանություն/ վրա ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Ավտոգազալիցքավորման բազմավառելիքային կայանի կառուցումը նախատեսվում է իրականացնել ՀՀ Կոտայքի մարզի, Ջրվեժ համայնք, գյուղ Ջովք Գլխավոր խճուղի թիվ 25 հողամաս հասցեում «Միլ Գազ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հողամասում:

Ընկերության կողմից սույն շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի մշակման համար հիմք է հանդիսացել ՀՀ Կոտայքի մարզի, Ջրվեժ համայնքի կողմից 02.05.2022թ տրված N101 նախագծման թույլտվությունը, ինչպես նաև վերոնշյալ նախատեսվող գործունեության ճարտարապետաշինարարական նախագիծը:

"Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով կազմվել է նախատեսվող գործունեության սույն հայտը, որում ամփոփվել են գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների գնահատման և վերլուծության արդյունքները:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա հնարավոր վնասակար ազդեցությունների կանխատեսումը, կանխարգելումը, նվազեցումը կամ բացառումը:

Գործունեության իրականացման ընթացքում հիմնական բնապահպանական և սոցիալական ռիսկերն են՝

- Օդային ավազանի աղտոտում՝ շինարարական աշխատանքների և շինարարական տեխնիկայի շարժիչների շահագործման ընթացքում,
- Շինարարության փուլում մերձակա բնակչությանը /հարևանությամբ առկա բնակել և հասարակական օբյեկտներ/ պատճառվող անհանգստություն՝ մեքենաների և տեխնիկայի տեղաշարժից,
- Հողերի դեգրադացիա և էրոզիա բուսածածկի վնասման արդյունքում,
- Հողերի և ջրային ռեսուրսների աղտոտում շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում առաջացող արտահոսքերով,
- Հողերի աղտոտում՝ շինարարության և շահագործման ընթացքում առաջացող թափոններով, շինարարական և կենցաղային աղբով,
- Աշխատողների առողջությանը հասցվող վնաս՝ գործունեության իրականացման շինարարության և շահագործման ընթացքում:

Հայտում բնապահպանական ելակետային տվյալների հիման վրա առաջարկվել և ամփոփվել են վերը նշված ազդեցությունների և շրջակա միջավայրի

մյուս բաղադրիչների վրա կանխարգելմանը և նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր:

Գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման փուլում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

➤ Աշխատանքային նախագծի հիման վրա նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի մշակում,

➤ Բնապահպանական փորձաքննության նպատակով նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումների անցկացում և հանրային քննարկումների արդյունքների (ներառյալ՝ արձանագրություն, մասնակիցների ցանկ տեսաձայնագրություն) ներկայացում շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ:

Ավտոգազալիցքավորման բազմավառելիքային կայանի կառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը պատրաստվել է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն որոնք բերված են ստորև:

1. 3 Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

Կոտայքի մարզի, Ջրվեժ համայնք, գյուղ Ջովք գլխավոր խճուղի թիվ 25 հողամաս հասցեում գտնվող 4328 քմ հողամասում «Միլ Գազ» ՍՊԸ կողմից Ավտոգազալիցքավորման բազմավառելիքային կայանի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև.

ՀՀ Սահմանադրություն (ընդունված 06.12.2015թ.) – 12-րդ հոդվածը <<Շրջակա

միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը>> սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բանական օգտագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) - Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման “հայեցակարգերի” պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Համաձայն՝ “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” ՀՀ օրենքի, 14-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրույթային փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները: Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների դասակարգվում են երեք կատեգորիայի՝ «Ա», «Բ», «Գ», ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2007թ.) - կարգավորում է արտանետման թույլտվությունները և սահմանում է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները: Աշխատավայրերում, բնակելի և հասարակական վայրերում, բնակարանային տնտեսության վայրերում, ինչպես նաև շինարարական հրապարակներում աղմուկի թույլատրելի սանիտարական նորմերը սահմանվում են ենթաօրենսդրական ակտով:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001) - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները:

Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

«Հողօգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (2008թ.) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004) - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները: ՀՀ Կառավարության 121-Ն որոշումը, որը վերաբերում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003), պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005)- կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը ՀՀ Կառավարության 2014թ. հուլիսի 31 N781, ՀՀ Կառավարության 2010թ. N71-Ն, 2010թ. ՀՀ Կառավարության N72-Ն, ՀՀ Կառավարության 14.08.2008թ. N967-Ն և ՀՀ Կառավարության 08.02.2018թ. N108-Ն որոշումները:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք (2000) - կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման ընթացակարգերը:

«Հարկային օրենսգիրք» ՀՀ օրենքը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14, 15, 16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

1. 4 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1. 4. 1 Նախատեսվող գործունեության նկարագիրը

Սույն նախնական գնահատման հայտում ներկայացված նախատեսվող գործունեության կատարող է հանդիսանում «Միլ Գազ» ՍՊԸ, որը սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի հասարակական նշանակության կառուցապատման տարածքում մտադիր է կառուցել բազմավառելիքային՝ բնական գազի ավտոգազալիցքավորման բազմավառելիքային կայան: Որի կառուցման համար հիմք է հանդիսանում «Միլ Գազ» ՍՊ ընկերությանը տարածքի համար սեփականության իրավունքով տրամադրված վկայականը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական՝ N 22042022-07-0161

տրված 22.04.2022թ /կադաստրային ծածկագիր՝ 07-030-0101-0202/, ինչպես նաև Ջրվեժ համայնքի ղեկավարի կողմից 02.05.2022թ տրամադրված N101 նախագծման թույլտվությունը: Նախատեսվող գործունեության կառուցապատման մակերեսը կազմում է ավելի քան 1500քմ, ուստի նախատեսվող գործունեությունը ըստ “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” ՀՀ օրենքի, 14-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետի 7-րդ ենթակետի համարվում է Գ կատեգորիայի քաղաքաշինական գործունեություն:

Առաջարկվող նախագծով բնական գազի ավտոգազալիցքավորման ճնշակայանի շահագործման համար նախատեսված է մեքենայական մասնաշենք, հասարակական սպասարկման նշանակության մասնաշենք, որն իր մեջ ներառում է սպասասրահ, հասարակությանը և սպասարկող անձնակազմի համար սանհանգույցներ, հասարակական սպասարկման սրճարան, առևտրի սրահ, պարգագույն թաքստոց, օպերատորական սենյակներ:

Նախատեսվում է նաև երկու հատ երկփողանի բնական գազի լցայունակներ՝ մեկ ընդհանուր մետաղական ծածկով, ստորգետնյա գազի կուտակիչ հոր: Հեղուկ գազի լիցքավորման կայանի շահագործման համար նախատեսված է մեկ հատ երկփողանի բաշխիչ, ինչպես նաև $V=10$ մ տարողությամբ ստորգետնյա հեղուկ գազի գազամբար: Հեղուկ վառելիքի լիցքավորման կայանի շահագործման համար նախատեսվում է երկու հատ երկ փողանի հեղուկ վառելիքի լցայունակ, (որից մեկ հատը բենզին, իսկ մյուսը՝ դիզ. վառելիքի համար), ինչպես նաև երկու հատ 3 և 5.5մ խոր. տարողությամբ հեղուկ վառելիքի տարաների համար հոր: Հակահրդեհային պաշտպանությունը իրականացվելու է հակահրդեհային հիդրանտների միջոցով: Տարածքում իրականացվելու է շանթապաշտպանություն: Բոլոր նոր կառուցվող մասնաշենքերը իրականացվում են ե/բ կրող կոնստրուկցիաներով, քարե պարփակող պատերով: Մեքենայական մասնաշենքի և լցայունակների ծածկերը նախատեսված է իրականացնել մետաղական թեթև կոնստրուկցիաներով:

Բնական գազի լցայունակների ծածկոցը ներկայացնում է հատակի նիշից 5.0մ բարձրությամբ թեթև կոնստրուկցիաներից ծածկ, որի հատակագծային լուծումը իրականացված է 4.00 առանցքային հեռավորությամբ, 5.65մ երկարությամբ, 2.0մ բարձրությամբ, միմյանց նկատմամբ զուգահեռ մի ձույլ ե/բ 9 հատ բաժանարար պատերից: Ճնշակայանը ե/բ կրող կոնստրուկցիաներով 13.0 x 8մ արտաքին չափերով կարկասային շինություն է: Բոլոր շինությունների արտաքին պարփակող պատերը իրականացվում են ուղիղ կտրվածքի տուֆ քարերով, իսկ ճնշակայանի պարփակող պատերը 200մմ հաստությամբ: Տանիքները միաթեք, ծպեղնակավարամածային կոնստրուկցիաներով, ծածկված տանիքի կղմինդրատիպ փոշեներկված թիթեղով: Ջրահեռացումը արտաքին է և կազմակերպված: Արտաքին հարդարումը իրականացվում է ց/ա սվաղով և ներկվում ջրադիմացկուն ներկով: Պարապետերը իրականացվում է ալիկաբոնդով: Միջնապատերը իրականացվում են պեմզաբլոկներով: Պեմզաբլոկները 200մմ և 100մմ հաստությամբ և ամրակապվում են

մետաղյա ձկուն կապերով պատերի և ծածկի սալերի հետ: Ներքին հարդարման աշխատանքները իրականացվում են ց/ա սվաղով, մածիկապատվում և ներկվում են լատեքսային ներկով: Նախագիծը իրականացվել ՀՀ գործող քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Շինարարությունը նախատեսվում է իրականացնել 12 ամսվա ընթացքում համաձայն օրացույցային գրաֆիկի: Նախագիծը կատարված է համաձայն ճարտարապետահատակագծային առաջադրանքի և գործող շիննորմերի և կանոնների:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

Պարզագույն թաքստոցը նախատեսված է 10 մարդու էքստրեմալ վիճակներում թաքնվելու համար:

Նախագծով տրված է պարզագույն թաքստոցի հատակագիծը, որտեղ առկա է սանհանգույց և լվացարան: Պարզագույն թաքստոցը ապահովված է բնական օդափոխությամբ: Թաքստոցի առաստաղից 150մմ խողովակով իրականացվում է օդի արտածումը, իսկ դռան ներքևի հատվածի ճեխքով իրականացվում է օդի ներածումը:

Ինժեներական մասեր

Ներքին գազատար

Նախագծում վերգետնյա մ/ճ գազատարի D150մմ տրամագծի, կատարված է համաձայն նախագծման առաջադրանքի, ճարտարապետական-շինարարական նախագծի, ինչպես նաև ՀՀ տարածքում գործող շինարարական նորմերի և կանոնների ՀՇՆ IV-12.03.01-04, СНИП 2.04.08-87, СП-42-103:

Նախագծվող գազատարի միացման կետը ընդունված է ըստ արտաքին գազատարի նախագծի:

Գազատարի մոնտաժման և փորձարկման աշխատանքները իրականացնել նախագծով՝ համաձայն պետական հսկողության և կանոնադրության:

Գազատարի տեղադրումը իրականացվում է պողպատյա անկար խողովակներից ԳՈՍՏ 8732-76:

ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՍ

Էլեկտրոտեխնիկական մասի նախագիծը մշակված է ըստ ճարտարապետական գծագրերի:

Շենքի հարկայնությունը 1 հարկ:

Նախագծով տրված է.

1. Ընդհանուր տվյալներ
2. Էլեկտրասնուցում: Գլխավոր հատակագիծ
3. Ճնշակային ուժային սարքավորումների էլեկտրասնուցում և հողանցում
4. Ճնշակային մասնաշենքի լուսավորություն
5. Սասարահի, օպերատորական մասնաշենքի և օպերատորականի լուսավորություն
6. Լցասյունակների լուսավորություն
7. Արտաքին լուսավորություն
8. Շանթապաշտպանություն
9. Հողակցում
10. Շանթարգել

Տեխնոլոգիական մասեր

1. ԱԳԼՃԿ

Նախատեսված է բնական գազով աշխատող ավտոմեքենաների գազալիցքավորման ճնշակային կայանի՝ «ԱԳԼՃԿ»-ի գազամատակարարման նախագիծ:

Նախագիծը կատարված է համաձայն շինարարական նորմերի և կանոնների՝ ՀՀՇՆ-IV-12.03.03-04:

Գազալիցքավորման ճնշակային կայանում տեղադրված են "BOPEL" V= 500լսմ/ժամ, P=250մթն. տիպի՝ երկու հատ ճնշակային տեղակայումներ:

Բնական գազը մ/ճ գազատարից տրվում է ճնշակներին, որոնք համալրված են գազի հովացման սարքավորումներով: Հովացման սարքավորումները աշխատում են օդով: Ճնշակներում գազի հովացումը կատարվում է ջրի միջոցով: Արդեն հովացված բ/ճ գազը տրվում է լցասյուններին և ստորգետնյա կուտակիչներին՝ V=400լ, 7հատ:

Ճնշակային տեղակայումները ապահովված են ավտոմատ կառավարման համակարգերով: Ավտոմատ կառավարման համակարգը դադարեցնում է ճնշակի աշխատանքը, եթե՝

- Դադարել է հովացման ջրի մատակարարումը
- Իջել է յուղի ճնշումը
- Շինությունում բարձր է գազի կոնցենտացիան
- Էլ. համակարգում առաջացել է անսարքություն
- Սեղման աստիճաններից հետո գազի պարամետրերը չեն համապատասխանում տրված պահանջներին:

Կուտակիչներում գազի ճնշումը կարգավորվում և պահպանվում է ավտոմատ եղանակով:

2. Հեղուկ վառելանյութ (բենզին և դիզ. վառելիք)

Բենզալցակայանի աշխատանքային նախագիծը մշակված է նախագծային առաջադրանքի հիման վրա:

Տարածքում նախատեսված է բենզինի և դիզ. վառելանյութի հորեր, որտեղ նախատեսված է 1 հատ բենզինի 3 մ³ և 1 հատ դիզ. վառելիքի 5.5 մ³ ծավալներով տարաներ, որտեղից խողովակաշարով վառելանյութը տրվում է լցասյունակներին:

3. Հեղուկ գազ

Նախագծով նախատեսված է իրականացնել հեղուկ գազի լիցքավորման կայան: Նախագիծը կատարված է համաձայն գործող շինարարական նորմերի և կանոնների: Նախագծում նախատեսված է տեղադրել մեկ հատ 10մ.խ ծավալով հեղուկ գազի գազամբար, մեկ հատ ընդունող լցասյունակ և մեկ բաշխիչ լցասյունակ:

Հեղուկ գազ տեղափոխող ավտոմեքենային, ռետինե փողրակով, հեղուկ գազը տրվում է ընդունող լցասյունակին, որից հետո Φ57X6 տրամագծով խողովակով տրվում է պոմպին, այնուհետև անցնելով ֆիլտր-նստվածքարկիչով լցվում է գազամբարի մեջ, մի մասն էլ տրվում է հեղուկ գազի լցասյանը: Գազամբարից գազը նույն պոմպի միջոցով Φ25X3 տրամագծով խողովակով տրվում է բաշխիչ լցասյունակին:

Բաշխիչ լցասյունակից ավելցուկային գազը Φ20X2.5 խողովակով հետ է վերադառնում դեպի գազամբար:

Բոլոր մետաղական մակերեսները մշակել ΠΦ-115 դեղին գույնի էմալի երկու շերտով:

Ավտոմատացում

1. ԱԳԼՃԿ

Տվյալ նախագիծը կատարված է համապատասխան նորմերի և կանոնների 2.04.08.87, СНИП 2.05.06.85:

Նախագծի մշակումը կատարված է °°°° մակնիշի առաջադրանքի հիման վրա:
ԱԳԼՃԿ-ն աշխատում է ավտոմատ ռեժիմով: Նախագծում նախատեսվում է՝
-Ավտոմատ կառավարում հովացման համակարգի,
-Անվտանգություն կոմպրեսորային տարածքում:

Կառավարումը հովացման համակարգի կատարվում է պրոցեսորային կոնտրոլերի օգնությամբ, որը հետևում է հովացման համակարգի աշխատանքը:

Նախագծում նախատեսված է ավտոմատ փակում էլեկ. մագնիսային փականով, երբ գազի պարունակությունը օդում բարձր է նորմայից կոմպրեսորայի տարածքում:

Էլեկտրական հաղորդագծերը իրականացվում են ստուգիչ մալուխով, որը անցկացվում է խողովակի կամ հնոցի միջով պատերով, կոնստրուկցիաներով և հողի միջով:

ԱԳԼՃԿ տարածքի ավտոմատացումը նախատեսվում է գազաաղտոտման հայտնաբերում, որը կատարվում է "Сигма-03" համակարգի օգնությամբ: Տվիչները "Сигма-03 ДВ" տեղադրվում են առաջնային և պահեստային կուտակիչներում և լիցքավորման սյունակների տարածքներում:

Օպերատորականում տեղադրվում են "Сигма-03" համակարգի գլխավոր սարքավորումները, լուսաձայնային ազդարարումը: Ավտոմատացման ցանցերը կատարվում են МКЭШ մակնիշի մալուխներով՝ տեղադրված ПНД խողովակի մեջ: Սարքերի մոնտաժը և ավտոմատ միջոցների անցկացումը կատարվում են միացման և դասավորության սխեմաների հիման վրա: Ավտոմատացման սարքերի հողանցումը կատարված է համաձայն ПУЭ, ВСН 296-81:

2. Հեղուկ վառելանյութ

Նախագիծը կատարված է գոյություն ունեցող տեխնիկական նորմերի և կանոնների/ СНИП 3.05.07-85, СНИП 2.11.03-93/ տեխնիկական միջոցների ընտրման և կիրառման առաջարկների հիման վրա: Նախագծում նախատեսվում է մակարդակի հսկում ստորգետնյա տարաներում, որը կատարվում է "СТРУНА" համակարգով: Ստորգետնյա տարաներում տեղադրվում է մակարդակաչափ (ППП), որը կատարում՝

- հսկում max մակարդակի 95%
- հսկում min մակարդակի 5%
- հսկում ջերմաստիճանի
- հսկում խտության

Օպերատորականում տեղադրվում են "СТРУНА" համակարգի գլխավոր սարքավորումները, լուսաձայնային ազդարարումը: "СТРУНА" համակարգը նախատեսում է փակում էլեկտրո-մագնիսային փականի, որը գտնվում է УН-80ФЭу հանգույցում, երբ ստորգետնյա տարաներում հասնում է թույլ տված մակարդակին, և բացվում է էլեկտրո-մագնիսային փականը հերթական ստորգետնյա տարայից:

Ավտոմատացման ցանցերը կատարվում են МКЭШ մակնիշի մալուխներով տեղադրված ПНД խողովակի մեջ:

Սարքերի մոնտաժը և ավտոմատ միջոցների անցկացումը կատարվում է միացման և դասավորության սխեմաների հիման վրա: Ավտոմատացման սարքերի հողանցումը կատարված է համաձայն ПУЭ, ВСН 296-81:

3. Հեղուկ գազ

Տվյալ նախագիծը կատարված է համապատասխան նորմերի և կանոնների СНИП 2.04.08.87, СНИП 2.05.06.85:

Նախագծի գծագրերի մշակումը կատարված է «Գ» մակնիշի առաջադրանքի հիման վրա: Նախագծով նախատեսված է իրականացնել հեղուկ գազի լիցքավորման կայան /ԱԳԼԿ/:

Կայանում տեղադրված է հեղուկ գազի տարողություն, որտեղ պահեստավորվում է հեղուկ գազը, որը մղում է գազը դեպի ընդունող լցայունակ պոմպի օգնությամբ / $P=8 \text{ атм}$ /:

ԱԳԼԿ-ն աշխատում է ավտոմատ ռեժիմով: Նախագծում նախատեսվում է՝

-Անվտանգություն տարածքում,

-Համակարգի ավտոմատ անջատում, երբ ճնշումը ցածր է 8 атм -ից:

Համակարգի կառավարումը կատարվում է ավտոմատացման վահանակի /AMT-raz/ օգնությամբ, որը հետևում է համակարգի աշխատանքին:

Նախագծում նախատեսվում է ավտոմատ պոմպի անջատում, երբ գազի պարունակությունը օդում բարձր է նորմայից տարածքում և ճնշումը ցածր է նորմայից:

Էլեկտրական հաղորդագծերը իրականացված են ստուգիչ մալուխով /ոչ տարածող այրում/, որը անցկացվում է խողովակի կամ հնոցի միջով, պատերով, կոնստրուկցիաներով կամ հողի մեջ խողովակով:

Մոնտաժային աշխատանքները կատարված են СНИП 3.05.07.85 և ПУЭ:

Հրդեհային ազդարարում

Ավտոմատ հրդեհային ազդարարման նախագիծը կատարված է գոյություն ունեցող հակահրդեհային տեխնիկայի նորմերի և կանոնների / СНУП 2.04.09-84, СНРА II-8.04.02-2005, СНУП 21-01-09, СНУП 3.05.07-85/ տեխնիկական միջոցների ընտրման և կիրառման առաջարկների հիման վրա:

Ավտոմատ հրդեհային համակարգը նախատեսված է հսկվող շինություններում հրդեհի հայտնաբերման և համապատասխան ծառայության տեղեկացման համար:

Որպես ավտոմատ հրդեհային ազդասարքերի ընդունող-հսկիչ սարք օգտագործվում է ДООР-4, որոնք գտնվում են օպերատորականում: Որպես ավտոմատ հրդեհային ազդասարքերի վերջնասարքեր օգտագործվում են ИП-212-3У, ИП101-07 ем, ИП-МСП-УИК մակնիշի տվիչներ: Ծխային տվիչները տեղադրվում են առաստաղի վրա: Հրդեհային ազդարարման համար տեղադրվում են լուսաձայնային և խոսքային ազդարարներ: Ավտոմատ հրդեհային ցանցերը կատարվում են КПСЭФ FRLS մակնիշի մալուխով ПНД խողովակների մեջ կամ կաբել-անցուղիների մեջ:

Սարքերի մոնտաժը և ավտոմատ միջոցների անցկացումը կատարվում են միացման և դասավորության սխեմաների հիման վրա: Հոդանցումը կատարված է

համաձայն ПУЭ և BCH296-81:

Ստորև բերված են

իրավիճակային հատակագծերը՝


ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ, Մ 1:2000

Կադաստրի վկայականով ամրագրված սեփական հողի սահմանը

--- S= 34420.0 մ²

Կառուցապատվող տարածք


..... S= 3460.0 մ²




Կադաստրի վկայականով ամրագրված սեփական հողի սահմանը
--- S= 4328.0 մ²

ՀՀ, ԿՈՏԱՅԻ ՄԱՐԶ.
ՁՐԿԵԺ ՀԱՄԱՅԻ Գ. ԶՈՎՔ.

ԱԳՃ	ԱՍՏԵՓԱՆՅԱՆ		Կոտայքի մարզ, Ձրվեժ համայնքի, Ձուլք գյուղի, Բյուսակո խմուղի հիվ 25 հասցեում Ավտոագալիքային բազմաբնակարան կառուցման նախագիծ ՃԱՐՏԱՐԿԱՆԱԿԱՆԱՐԱԿԱՆ ՄԱՍ			ՊԱՏՎԵՐ Ն22-22
			ՓՈՒԼ	ԹԵՐՁ	ԹԵՐԹԵՐ	
			ԱՆ	6-2	18	
			ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ, Մ 1:2000			«ՆՅԱՄԱՍԱՏԱՆԱԳՈՒԹՅՈՒՆ» Ս Պ Ը



ՕՊԵՐԱՏՈՐԻ ՍԵՆՅԱԿԻ, ՄՊԱՍԱՍՐԱՅԻ, ՍՐՃԱՐԱՆԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ, Մ 1:75



№	Անվանացանկ	Մակերես
1	Երկրորդական	11.4 մ²
2	Մուտքային	24.4 մ²
3	Օպերատորի սենյակ	10.5 մ²
4	Աշխատասենյակ	9.53 մ²
5	Սահմանագծային (ՀԱՇՎԱՆՈՒՄ)	4.56 մ²
6	Սահմանագծային	3.30 մ²
7	Սահմանագծային	3.20 մ²
8	Թանգան	9.3 մ²
9	Սահմանագծային	2.9 մ²

ԼԳԶ	ԱՍՏԵՓԱՆՅԱՆ	Կոտայքի մարզ, Ջրվեժ համայնքի, Զովա գյուղի, Գլխավոր խնդիր	ՊԱՏՎԵՐ ՆՀՀ-22		
		Զինվորական ինժեներական ծառայության համար	ՓՈՒԼ	ԹԵՐԹ	ԹԵՐԹԵՐ
			ԱՆ	6-4	18
		ՕՊԵՐԱՏՈՐԻ ՍԵՆՅԱԿԻ, ՄՊԱՍԱՍՐԱՅԻ, ՍՐՃԱՐԱՆԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ, Մ 1:75	«ՍԵՆՅԱՍԱՄԱՆԱՏԱՐԱԳՈՒԹՅՈՒՆ» Ս Պ Ը		

Տարածքի WGS-84 (ARMREF 02) կոորդինատային տվյալներով քարտեզ-սխեմա

Կադաստրի
կոմիտե



Տարածքը ազատ է շենք-շինություններից, մոտակա շենքը «Պեռլիտ ԱՐ» ՍՊԸ-ի գործարանն է՝ 4 արտադրական տարածքներով, որոնք գտնվում են ավելի քան 50մ հեռավորության վրա ԱԳԼՃԲԿ տարածքից: Այն սահմանազատվում է 2 մ բարձրությամբ քարե պարսպով: Որը ևս պատկանում է տվյալ կառուցապատողին:

Հեռավորությունները՝

Ճնշակայանից «Պեռլիտ ԱՐ» ՍՊԸ՝ 64.4 մ
Ճնշակայանից Ձորաղբյուրի վարդեր (ջերմոցներ)՝ 245.8մ
Ճնշակայանից Երևան տանող ավտոճանապարհ՝ 40.8 մ
Ճնշակայանից արտադրական տարացք՝ 66.1մ

Դիզ.վառելիքի լցասյունակից «Պեռլիտ ԱՐ» ՍՊԸ՝ 49.5 մ
Դիզ.վառելիքի լցասյունակից Երևան տանող ավտոճանապարհ՝ 11.5 մ
Դիզ.վառելիքի լցասյունակից արտադրական տարացք՝ 38.0 մ

Բենզինի լցասյունակից «Պեռլիտ ԱՐ» ՍՊԸ՝ 49.9 մ
Բենզինի լցասյունակից Երևան տանող ավտոճանապարհ՝ 15.5 մ
Բենզինի լցասյունակից արտադրական տարացք՝ 43.0 մ

Գազի կուտակիչների ստորգետնյա հորից «Պեռլիտ ԱՐ» ՍՊԸ՝ 23.6 մ
Գազի կուտակիչների ստորգետնյա հորից Երևան տանող ավտոճանապարհ՝ 57.8 մ

Հեղուկ գազի ստորգետնյա տարայից «Պեռլիտ ԱՐ» ՍՊԸ՝ 50.0 մ
Հեղուկ գազի ստորգետնյա տարայից Երևան տանող ավտոճանապարհին՝ 50.8 մ

Բենզինի ստորգետնյա տարայից «Պեռլիտ ԱՐ» ՍՊԸ՝ 41.2 մ
Բենզինի ստորգետնյա տարայից Երևան տանող ավտոճանապարհ՝ 8.3 մ
Բենզինի ստորգետնյա տարայից արտադրական տարացք՝ 35.0 մ

Դիզ.վեռելիքի ստորգետնյա տարայից «Պեռլիտ ԱՐ» ՍՊԸ՝ 37.8 մ
Դիզ.վեռելիքի ստորգետնյա տարայից Երևան տանող ավտոճանապարհ՝ 8.3 մ
Դիզ.վեռելիքի ստորգետնյա տարայից արտադրական տարացք՝ 35.0 մ

Էլ. Ենթակայանից «Պեռլիտ ԱՐ» ՍՊԸ՝ 3.9 մ

Շին անձնակազմի համար կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար հատուկ շինություններ չեն նախատեսվել, քանի որ նրանք օգտվելու են Պեռլիտի արտադրական տարածքից:

1. 4. 2 Կանաչապատման և բարեկարգման աշխատանքներ

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է ԱԳԼՃԲԿ-ի տարածքը կանաչապատել և բարեկարգել առաջնորդվելով ՀՀ կառավարության 08.02.2018թվականի N108-Ն որոշման դրույթներով: Այս աշխատանքների շրջանակում նախատեսվում է՝ երթևեկելի հատվածների, անցուղիների ասֆալտապատում, մայրերի ստեղծում, բազալտե եզրաքարերի իրականացում: Կանաչապատվող տարածքի մակերեսը կազմում է 870 քմ կամ 20%:

Կանաչապատման աշխատանքների շրջանակում նախատեսվում է տնկել տարբեր տեսակի՝ տարածաշրջանին բնորոշ թփատեսակներ (սովորական եղրևանի, վարդի տեսակներ), կիրականացվի նաև ճմապատում և սիզամարգերի ստեղծում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և համայնքապետարանի համաձայնությամբ:

Նորաստեղծ կանաչ գոտիներում անհրաժեշտ սևահողը կմատակարարվի Ջրվեժ համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված՝ պահպանելով ՀՀ-ում գործող օրենսդրությունը:

Ոռոգումը իրականացվելու է ջրցան մեքենաների միջոցով պայմանագրային հիմունքներով՝ բերով ջրով /մեկ ջրատար մեքենա օրական/ մոտակա այն համայնքից, որտեղ առկա է ոռոգման ջուր:

1. 4. 3 Հողային աշխատանքներ. շինտեխնիկա

Ավտոգազալիցքավորման բազմավառելիքային կայանի կառուցումը նախատեսվում է իրականացնել ՀՀ Կոտայքի մարզի, Ջրվեժ համայնքի, գյուղ Ջովք Գլխավոր խճուղի թիվ 25 հողամաս հասցեում «Միլ Գազ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հողամասում:

Փորման աշխատանքների արդյունքում հանվում է ընդհանուր 60 մ³ հողաշերտ և գրունտ, որոնք 4-րդ կարգի գրունտներ են: Այդ ընթացքում փոշու արտանետումները կրճատելու նպատակով իրականացվում է հողի և գրունտի խոնավեցում:

Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները կլինեն տեղայնացված՝ ենթակա արագ ցրման և ժամանակավոր՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը: Հնարավոր վնասակար ազդեցությունները կբացառվեն կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացման դեպքում, մասնավորապես՝ փոշու արտանետումները նվազեցնելու համար կիրականացվի շինհրապարակի պարբերաբար ջրցանում, գրունտի խոնավացում, տեղափոխող մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի թափքի ծածկման պայմաններում:

Շինարարական աշխատանքների ընթացքում ԱԳԼՃԿ-ի և օժանդակ շինությունների կառուցման համար նախատեսվում է ընդհանուր 60 խմ ծավալով հողային աշխատանքների հանույթ, որն էլ ամբողջությամբ կօգտագործվի գազալցակայանի շրջակա տարածքի հարթեցման և բարեկարգման համար:

Շինարարության ժամանակ օգտագործվող հիմնական շինարարական տեխնիկայի, փոխադրամիջոցների ցանկը ներառում է՝


- ☐ Էքսկավատոր՝ 1 հատ
- ☐ Բեռնատար՝ 1 հատ
- ☐ Բետոնխառնիչ մեքենա՝ 1 հատ
- ☐ Ինքնաթափ՝ 1 հատ

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Շինարարական աշխատանքների ժամանակացույցը և շինհրապարակի կազմակերպման հատակագիծը բերված են ստորև՝

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԱՄԱՐՄԱՆ ՀԱՄԱՐՄԱՆ ԿԱՌԱՐԱՆ


Գ	ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Մեկ տարի											
		1											
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	Չողային աշխատանքներ												
2	Ջիմբերի իրականացում												
3	Կարկասի և ժածկերի իրականացում												
4	Արտաքին պատերի և միջնորմների իրականացում												
5	Դռների և պատուհանների տեղադրում												
6	Արտաքին երեսպատում												
7	Ինժեներական կոմունիկացիաների իրականացում												
8	Ներքին հարկարման աշխատանքներ												
9	Տարածքի քարեկարգման աշխատանքներ												



ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀՐԱՎԱՆԳ

- Տեղիտորիայի համույթը մինչև շինարարական աշխատանքների կատարումը և միաժամանակ մեղադրվող զորավոր համաժայնեցման իրավասու կազմակերպությունների հետ, տեղիտորիայով անցնող կոմունիկացիոն ինժեներական ցանցերի համապատասխանությունը նախատեսվող աշխատանքների հետ ստուգելու համար և անհրաժեշտության դեպքում ազատել տեղիտորիան նրանով անցնող կոմունիկացիոն ինժեներական ցանցերից :
- Շինարարության կատարման ժամանակ անհրաժեշտ է կազմակերպել անվտանգության միջոցառումներ.
 - Աշխատատեղերի տեղադրությունը ըստ բարձրության 1.3 մետր և ավելի տարբերությունների դեպքում,
 - Բարձր տեղադրված կոնստրուկցիաների, նյութերի, գործիքների անկումից,
 - Մեքենաների շարժական մասերի և նրանցով տեղաշարժվող կոնստրուկցիաների և նյութերի անկումից,
 - Շենքի և շինության չամրացված կոնստրուկցիաների փլուզումից,
 - Մեքենաների մասերի անկումից,
 - Աշխատանքի ժամանակ վնասակար նյութերով աշխատելիս անվտանգության ապահովման համար,
 - Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ նյութերի և կոնստրուկցիաների աշխատատեղերում ճիշտ դասավորությունը,
 - Աշխատանքների կատարման հերթականությունը հաշվի առնելով կոնստրուկցիաների կայուն տեղադրման համար,
 - Կոնստրուկցիաների և շինվածքների տեղադրման ժամանակ ապահովել միջոցառումներ աշխատողների ցած չնկնելու և նրանց կողմից իրերի ընկնելու վտանգի դեմ համապատասխան համապատասխան պաշտպանիչ միջոցառումներ իրականացնելու,
 - Շէջրտեղ կոմունիկա մակնիշը, նրա տեղադրման վայրը և նրա աշխատանքային վտանգավոր գոտին նշանակելով դրոշակներով ցուցանակներով և այլ միջոցներով,
 - Ապահովել աշխատատեղերի անվտանգությունը բարձրության վրա:
 - Շտեղ տեղադրվող կոնստրուկցիաների հաջորդականությունը,
 - Մոնիթորինգ ընթացքում ապահովել կոնստրուկցիաների և շինվածքների կայունությունը,
 - Քարի շարք վերին հարկում պետք է կատարվի միջնարկային կրող կոնստրուկցիաների ծածկի, աստիճանավանդակների և հարթակների տեղադրումից և պատրաստումից հետո:

ԼՊԳ	ԱՄՏԵՓԱՆՅԱՆ	Կոտայքի մարզ, Տեղիտորիայի, Ցուլի գյուղի, Գյուլիտի խմուրի փվ 25 հասցեում	ՊԱՏՎԵՐ 122-22		
		Ավտոգազափոխարկման ջանքերի կատարման նախագիծ			
		ՃԱՐՏԱՐԱՐՈՒՄԻ ՄԱՍ	ՓՈՒԼ	ԹԵՐԹ	ԹԵՐԹԵՐ
			ԱՆ	6-18	18
		ՀՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԱՅՈՒՑԱՅԻՆ ԳՐԱԾԻԿ	«ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՀՐԱՎԱՆԳ» Ս Պ Ը		



Լ46	Ա.ՍԵՅԺԱՆՅԱՆ		Կոտայքի մարզ, Զրնոժ համայնք, Զով գյուղի, Գլխավոր խնդիր: Բնակավայրի զարգացումը 25 հասցեում	ՊՍՏՆԻՐ 022-22
			Սկզբնական լիցքավորման ժամկետները պահպանելու կայանի կառուցման նպատակով	
			ՃԱՐՏԱՐԱՐՆԵՍԱՇԽԱՏԱՐԱՐՈՒՄԿԱՆ, ՄԱՍ	ՓՈՒԼ
			ՀՈՒ. ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՍՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ	ԹԵՐԻԹ 6-17
				ԹԵՐԻԹ 18
				«ՍԵՅՄԱՍՆԱՆԿԱՆԿՈՒԹՅՈՒՆ» Ս Պ Ը

1. 4. 4 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Շինարարության ժամանակ որպես շինանյութեր օգտագործվելու են՝ երկաթբետոն, մետաղ, փայտանյութ, խիճ, քար, ավազ: Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքների ընթացքում, շինարարական աղբն է /10խմ ծավալով/, որն ամբողջությամբ կտեղափոխվի Ջրվեժ համայնքի հետ պայմանագրային հիմունքներով հատկացված վայր:

Շինարարական աշխատանքներում մասնակցող աշխատողների ընդհանուր թիվը՝ 18 մարդ, որից

☐ Բանվորներ -15 մարդ

☐ ԻՏԱ – 3 մարդ

ա) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$W_{է.է.} = (n \times N + n_1 \times N_1) \times T$, որտեղ

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 3 մարդ

N – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n_1 – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 15 մարդ

N_1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 360 օր

$W_{բ.տ.} = (3 \times 0.016 + 15 \times 0.025) \times 360 = 152.3$ խմ/շին. ժամ.:

բ) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$U_1 = S_1 \times K_1 \times T$, որտեղ՝

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 300 մ²,

K_1 – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 150

$U_1 = 500 \times 0.0015 \times 150 = 112.5$ խմ/շին. ժամ.:

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 264.8 խմ/շին. ժամ:

Շինարարական աշխատանքների ընթացքում խմելու և կենցաղային կարիքների համար անհրաժեշտ ջրային ռեսուրսները նախատեսվում է բերել հատուկ նախատեսված ավտոմեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով, մոտակա այն համայնքից, որտեղ առկա է տվյալ որակի ջուր:

Շինարարական տրանսպորտային միջոցները, անիվները և սարքավորումները նախատեսվում է լվանալ համայնքում գործող մասնագիտացված կետերում:

1. 4. 5 Գազալցակայանի տեխնիկական բնութագրերը

Ըստ տեխնիկական պայմանների, ավտոմեքենաների գազալցման մոդուլային կայանները նախատեսված են 9 բալ /ներառյալ/ սեյսմակայունության, -60°C արտաքին նվազագույն ջերմաստիճանի, 1960 Պա ձյան բեռի և 441 Պա քամու դինամիկ ճնշման հաշվարկով:

Գազալցվող ավտոմոբիլների համար սեղմված վառելիքային գազը պետք է համապատասխանի ԳՈՍՏ 27577-87 պայմաններին: Դուրս եկող գազի հաշվարկային կազմը տոկոսային հարաբերությամբ ներկայացվում է՝

Մեթան	-95,01
Էթան	-1,42
Պրոպան	-0,51
Իզոբուտան	-0,05
Իզոպենտան	-0,02
Թթվածին	-0,06
Ազոտ	-2,45
Հեքսան	-0,01
Ծծմբաջրածին	-0,0015 գր/մ ³ :

Թույլատրված պարունակությունը և լիցքավորման պարամետրերն են՝

- Էթան – մինչև 20%, պրոպան – մինչև 5%, բուտան– մինչև 2%, ազոտ– մինչև 10%, ածխաթթու գազ– մինչև 2%:

- Գազի խտությունը /կգ/մ³/ - 0,65+0,85:

- Նվազագույն ջերմաստիճությունը – 7920 կկալ/մ³

- Խոնավության և ծանր ածխաջրածինների ցողի կետերի ջերմաստիճանը և մեխանիկական խառնուրդների պարունակությունը ԱԳԿԿ մուտքին՝ ըստ OCT 51.40

- Մուտքին գազի ջերմաստիճանը՝ +30o-ից -5o

- Մուտքին գազի ճնշումը՝ 0,4+0,6 ՄՊա /բացարձակ/

- Մեքենայի բալոններում գազի ամենաբարձր ճնշումը՝ 19,6 ՄՊա,

- Մեքենան գազով լիցքավորելու ծավալը՝ 60 նմ³ - ԳԱԶ մակնիշի ավտոմեքենաների համար 80 նմ³ - ԶԻԼ մակնիշի ավտոմեքենաների համար,

- Մեքենան գազով լիցքավորելու հաշվարկային ծավալը՝ 70 նմ³,

- Մեկ մեքենայի լիցքավորման ժամանակը, ներառյալ օժանդակ գորրծողությունները՝ 10-12 րոպե է:

ԱԳԼՃԿ-ի աշխատանքի ռեժիմը շուրջօրյա է՝ առանց վերանորոգման համար աշխատանքների լրիվ դադարեցման: Լրիվ զբաղվածության դեպքում տարվա մեջ աշխատանքի հաշվարկային օրերի քանակը 360 աշխատանքային օր է:

Տարողությունների կառուցվածքը թույլ է տալիս իրականացնել լիցքավորման փողրակների ինչպես աջ, այնպես էլ ձախ տեղադրվածություն ունեցող մեքենաների լիցքավորումը: Այդ պատճառով էլ ԱԳԼՃԿ-ի տարածքում ավտոմոբիլների հանդիպակաց երթևեկություն չպետք է լինի:

1.4.6 Տեխնոլոգիական գործընթացի համառոտ նկարագիրը

Բնական գազը հիմնական գազատարից անցնելով ճնշման կարգավորիչով մտնում է կոմպրեսորային բաժին:

Կոմպրեսորային բաժնում գազը մաքրվում է մեխանիկական խառնուրդներից և խոնավությունից և մտնում կոմպրեսոր /ГП-10, 250 МУ-2 տիպի/:

Կոմպրեսորի սառեցումը կատարվում է ջրային եղանակով: Կոմպրեսորներից հետո գազը մաքրվում է յուղից և խոնավությունից: Անջատված յուղը և ջրի կաթիլները հավաքվում են հատուկ տարողության մեջ:

Գազալիցքավորման ճնշակային կայանում տեղադրված են “БОРЕЦ” V=500լսմ/ժամ, P=250մթն. տիպի՝ երկու հատ ճնշակային տեղակայումներ:

Բնական գազը մ/ճ գազատարից տրվում է ճնշակներին, որոնք համալրված են գազի հովացման սարքավորումներով: Հովացման սարքավորումները աշխատում են օդով: Ճնշակներում գազի հովացումը կատարվում է ջրի միջոցով: Արդեն հովացված ք/ճ գազը տրվում է լցայուններին և ստորգետնյա կուտակիչներին՝ V=400լ, 7հատ:

Ճնշակային տեղակայումները ապահովված են ավտոմատ կառավարման համակարգերով: Ավտոմատ կառավարման համակարգը դադարեցնում է ճնշակի աշխատանքը, եթե՝

- Դադարել է հովացման ջրի մատակարարումը
- Իջել է յուղի ճնշումը
- Շինությունում բարձր է գազի կոնցենտացիան
- Էլ. համակարգում առաջացել է անսարքություն
- Սեղման աստիճաններից հետո գազի պարամետրերը չեն համապատասխանում տրված պահանջներին:

Կուտակիչներում գազի ճնշումը կարգավորվում և պահպանվում է ավտոմատ եղանակով:

Ավտոմեքենաների գազալիցքավորումը կատարվում է ճկափողի օգնությամբ: Ճկափողերը միացված են կոմպրեսորների մուտքին և մնացորդային գազը ներքաշվում է կոմպրեսորների մուտքի գծի մեջ:

1. 4. 7 Ջրային ռեսուրսների պահպանություն

Նախատեսվող ավտոգազալիցքավորման բազմալատելիքային կայանի ջրամատակարարումն իրականացվելու է համաձայն «Պետլիտ» ԱՐ ՍՊ ընկերության տեղեկանքի:

Ջուրն օգտագործվելու է կենցաղային և կոմպրեսորների հովացման համակարգի նպատակով: Հակահրդեհային ցանցի հաշվարկային պահանջվող ջրի քանակության համար, անհրաժեշտ է նախատեսել ջրի պաշարապահ ծավալ 50լսմ տարողությամբ:

Տարածքում կոյուղու ցանցը բացակայում է: Կայանում կառաջանան միայն կենցաղային կեղտաջրեր, որի համար կնախատեսվի անջրթափանց հոր 2.25 քմ մակերեսով:

1. 4. 8 Ջրամատակարարում և կոյուղի

Ջրամատակարարման և կոյուղու ցանցերի նախագիծը մշակված է ըստ ճարտարապետական գծագրերի:

Շենքի հարկայնությունը 1 հարկ: Նախագծվել է սառը ջրամատակարարման, կոյուղու և ջրահեռացման ցանցեր:

Նախագիծը կատարված է համաձայն գործող ՇՆ. և Կ.2.04-01.85-ի նորմերի:

Հաշվարկային տվյալներ

Նախագծային գազալիցքավորման կայանի սանիտարական հանգույցների և հակահրդեհային ջրի իրացումը տրված է գործող Փ-100մմ ջրատարին: պարգագույն թաքստոցում նախատեսված է սան հանգույց: Հակահրդեհային ցանցի հաշվարկային պահանջվող ջրի քանակության համար անհրաժեշտ է նախատեսել ջրի պաշարապահ ծավալ 120 խ. մ տարողությամբ ե/բետոնե ջրավազան, համապատասխան պոմպակայանով: Պոմպակայանով ջրավազանից ջուրը մղվում է հակահրդեհային դիտահոր, որտեղ նախատեսված է 2 հատ հակահրդեհային Փ-50մմ միացման գլխիկներ: Տարածքում նախատեսված է տեղադրել առաջնային հակահրդեհային միջոցներ: Պոմպակայանից ջրագիծը միացվում է նաև 50 խ.մ տարողությամբ հովացման բաքին: Տաք ջրի պատրաստումը կատարվում է էլեկտրոտաքացուցիչի միջոցով, որը տեղադրված է խոհանոցի պատի վրա: Շենքի մեջ տաք և սառը ջրագծերը հատակներում տեղադրված են հատակի բետոնի միջով, իսկ պատերի վրա սվաղի միջով՝ ջերմամեկուսացումով:

Խողովակները ընտրված են մետաղապլաստե Փ=15-50մմ ջերմամեկուսացումով: Կենցաղային կեղտաջրերը սան-սարքերից ինքնահոս հավաքվում և հեռացում են

ներքին ցանցի միջոցով կոյուղու բակային ցանց, որտեղից լցվում է գործող արտաքնոցային փոս:

Արտաքնոցային փոսից ժամանակ առ ժամանակ ավտո-ցիստեռներով հավաքված կեղտաջրերը տեղափոխվում են նախատեսված վայր: Կոյուղու կանգնակների օդափոխության խողովակը նախատեսված է անցկացնել տանիքից դուրս: Ցանցերի համար կիրառված են պլաստմասե խողովակներ պատերի և առաստաղների վրա Φ -50-100մմ: Ցանցերի վրա նախատեսված են ստուգիչներ՝ ստուգումներ կատարելու և հետագա շահագործելու համար: Նախատեսվում է արտաքին նախագծային կոյուղագիծը միացնել նախագծային արտաքնոցային փոսին:

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՆ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2.1 Ֆիզիկաաշխարհագրական պայմանները

Ավտոգազալիցքավորման բազմավառելիքային կայանի կառուցումը նախատեսվում է իրականացնել ՀՀ Կոտայքի մարզի, Ջրվեժ համայնքի, Զովք գյուղում, որի մակերեսը՝ 16.46կմ², բնակչությունը՝ 1013 մարդ: Գյուղում գործում են՝ 1 դպրոց, 1 մշակույթի տուն, համայնքային կենտրոն: Ծովի մակերևույթից բարձր է 1670 մետրով, հեռավորությունը մայրաքաղաքից՝ 21 կմ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 50 կմ:

Աշխարհագրական դիրքը՝ նախալեռնային է: Կլիմայական պայմանները՝ բարենպաստ, մեղմ ձմեռով, համեմատաբար չոր եղանակով: Ջրվեժ համայնքը գտնվում է Կոտայքի մարզի հարավային մասում, սահմանակից է Երևան քաղաքի Նոր-Նորք, Ավան-Առինջ, Էրեբունի համայնքներին և մարզի Առինջ, Ձորաղբյուր, Ողջաբերդ համայնքների վարչական տարածքներին: Մարզկենտրոնից գտնվում է 45 կմ հեռավորության վրա, Աբովյան քաղաքից՝ 9 կմ: Զովք գյուղը գտնվում է Գեղամա լեռնաշղթայի արևմտյան ստորոտում, Կոտայքի մարզի վարչական տարածքի հարավ-արևմտյան հատվածում: Զովք գյուղը հարավից սահմանակից է Ձորաղբյուր գյուղին և հյուսիսից՝ Գեղաշեն գյուղին: Ձորաղբյուր գյուղական համայնքը գտնվում է Կոտայքի մարզում, սահմանակից է Երևան քաղաքին և մարզի 6 գյուղերի վարչական տարածքներին:

2.2 Համայնքի կլիմայական պայմանները

Օդի բացարձակ մինիմալ ջերմաստիճանը՝ -30°C , իսկ մաքսիմալը՝ $+39^{\circ}\text{C}$: Տարեկան տեղումների քանակը կազմում է 458/528 մմ:

Հողի սառեցման խորությունը՝ 80 սմ է: Ձյան ծածկույթի միջին բարձրությունը՝ 25 սմ: Առաջին ձյունը տեղում է դեկտեմբերի վերջին տասնօրյակում և պահպանվում է մինչև մարտի վերջը:

Կլիմայական տեսակետից հայցվող տարածաշրջանը մտնում է չափավոր ցուրտ ձմեռով և տաք ամառով բնորոշվող գոտու մեջ: Կամարիս բնակավայրում և նրա շրջապատում բնութագրվում է հետևյալ կերպ (ըստ Մայակովսկու օդերևութաբանական կայանի կատարած հետազոտությունների). օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը՝ -29°C ., իսկ առավելագույնը՝ $+38^{\circ}\text{C}$., օդի միջին տարեկան ջերմաստիճանը՝ $+15^{\circ}\text{C}$., տարվա ամենացուրտ ամսվա՝ հունվարի միջին ջերմաստիճանը՝ $-15-18^{\circ}\text{C}$., տարվա ամենատաք ամսվա՝ օգոստոսի միջին ջերմաստիճանը՝ $+30^{\circ}\text{C}$.: Մթնոլորտային տեղումների տարեկան քանակը կազմում է 534 մմ: Ձյան ծածկույթի միջին

հաստությունը հասնում է 15-30սմ: Հողի սառցակալման առավելագույն խորությունը հասնում է 61սմ: Քամիների գերակշռող ուղղությունը ամռանը և ձմռանը հարավից, տարեկան միջին արագությունը 1.7մ/վրկ:

Հողի սառեցման հաշվարկային խորությունը 82 սմ, Ջեռուցման սեզոնի տևողությունը կազմում է 160 օր, միջին ջերմաստիճանը՝ -1.1°C :

Կլիմայական պարամետրերը Ջրվեժ օդերևութաբանական կայանի տվյալներով բերված են ստորև՝

Աղյուսակ 1.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը Ջրվեժ օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութաբ. կայանը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C°												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Ջրվեժ	1410	-4.5	3.5	2.2	9.1	13.8	18.0	22.1	22.2	17.9	10.8	3.9	-2.5	9.1	-31	40

Աղյուսակ 1.2 Օդի հարաբերական խոնավությունը Ջրվեժ օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութաբ. կայանը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսականժ. 15-ին	
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12		հունվարին	օգոստոսին
Ջրվեժ	1410	80	79	68	63	62	56	50	50	51	64	77	80	65	-	-

Աղյուսակ 1.3. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը Ջրվեժ օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը Միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Տարեկան	Ձնածածկույթը, մմ	
	Ըստ ամիսների													Առավելագույն տասնօրյակային ձնածածկույթը, մմ	Տարվա Ձնածածկույթի օրերը
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Ջրվեժ	32	34	51	62	72	39	18	9	16	39	36	32	440	55	77

Աղյուսակ 1.4. Քամու պարամետրերը Ջրվեժ օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիություն, % /միջին արագություն, մ/վրկ ըստ ուղղությունների								Անհողմությունների հոսքի հաճախություն, %	Միջին ամսական արագություն, մ/վ	Միջին տարեկան արագություն, մ/վ	Ուժեղքամիներով (Մ15 մ/վ) թվաքանակ	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկանգամ "n" տարիներին թագնվում		
			Հյուսիսային (Հս)	Հյուսիսարևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավարևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավարևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիսարևմտյան (ՀսԱրմ)					20	50	100
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Ջրվեժ	866	Հունվար	6	48	11	3	15	6	9	2	40	1.1	2,6	29	24	29	34
			1.7	1.8	1.7	1.5	2.7	1.9	1.8	1.7							
		Ապրիլ	5	48	7	3	17	10	8	2	23	2,6					
			3.0	3.8	2.7	2.4	2.4	2.8	2.7	2.1							
		Հուլիս	6	73	4	1	7	4	4	1	11	4.8					
			4.9	5.5	4.9	1.7	3.0	2.5	3.0	1.8							
		Հոկտեմբեր	5	55	6	3	16	8		1	31	1,9					
			2,7	3,1	2,1	1,9	1,9	2,3	1.8	2.2							

2.3 Տարածքի ինժեներա-երկրաբանական, հիդրոերկրաբանական պայմանները

Ջրվեժ համայնքի տարածքը գտնվում է Երևան քաղաքի հյուսիս-արևելյան մասում, քաղաքի մոտակայքում, Արարատյան հարթավայրի հյուսիս-արևելյան մասի նախալեռնային գոտում: Խոշորացված համայնքի (Ջրվեժ, Ձորաղբյուր, Ձովք) վարչական տարածքը կազմում է 5490.55 հա, մշտական բնակչությունը 2019թ. տվյալներով կազմում է 10511մարդ: Ջրվեժ համայնքի տարածքում գերիշխում է տափաստանային, իսկ լեռնալանջերին՝ ալպիական լանդշաֆտը, որը ծառայում է որպես արոտավայր: Նախատեսվող գործունեության տարածաշրջանն իրենից ներկայացնում է հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք տարածվածությամբ կտրտված արտաբերման կոներ: Ընդհանուր առմամբ տարածքն ունի թեք ռելիեֆ: Տարածաշրջանում առկա դարավանդի նստվածքները բաղկացած են խոշոր կոպիճի շերտերից: Կան նաև մեղմաթեք ռելիեֆով, կտրտված ոչ խորը ձորերով տարածքներ: Թեք ու անտառագուրկ լանջերում շատ են հեղեղատներն ու փոքր հովիտները: Շրջանի տարածքի մեծ մասում տեղանքի թեքությունները 8°-ից չեն անցնում, ուստի տնտեսական յուրացման համար համեմատաբար դյուրին են: Համաձայն Ջրվեժի գլխավոր հատակագծի՝ նկատի ունենալով համայնքի տեղադիրքը, ռելիեֆի առանձնահատկությունները (թույլ բլրակային, միատարր, համեմատաբար հարթ), բուսածածկից ազատ չիրացված տարածքները, նպատակահարմար է Ջրվեժ-Ողջաբերդ գոտին՝ ընդհանուր առմամբ, և մասնավորապես, Ջրվեժի գյուղական համայնքը զարգացնել որպես հանգստի, զբոսանքի, սպորտի և բուժման քաղաքամերձ գոտի՝ մայրաքաղաքի բնակիչների համար: Տարածաշրջանը գտնվում է արարատյան հովտի արևելյան կողմում, որտեղ ձգվում է Գեղամա լեռնաշղթան՝ լավային ծածկույթով ուռուցիկ-վահանաձև մակերևույթի վրա վեր խոյացող հրաբխային կոներով: Լեռնաշղթան ունի 140 կմ երկարություն, ամենաբարձր գագաթը Աժդահակն է՝ 3597մ: Գեղամա լեռների գառիթափ լանջերը գրեթե ողողամաշված չեն, ինչը բացատրվում է կլիմայի չորությամբ: Լեռների գագաթային մասում հստակ երևում են հնագույն սառցապատումների հետքերը: Լեռնային գոտու մակերևույթը բավականին բարդ է: Աժդահակի գագաթամերձ բարձրավանդակը կազմված է հրաբխային ապարներից՝ մասնատված բազմաթիվ խորը հովիտներով: Գեղամա լեռների արևմտյան լանջերն ալիքաձև և սանդղավոր են, կտրտված ժամանակավոր հոսք ունեցող հեղեղատներով, որոնք վարարում են զարնանային ձնհալքերի ժամանակ: Միջին լեռնային մասում գերակշռում են չորրորդային ժամանակաշրջանի 26 անդեզիտ-բազալտներ և բազալտներ: Դեպի Նորք-Ջրվեժ սարահարթ իջնող լեռնալանջերը խիստ մասնատված են՝ երոզիայի ենթարկված հովիտներով և ձորակային ցանցով, որոնցով ձնհալքի և զարնանային վարարումների ժամանակ հոսում են սելավներ: Դրանց մի մասը իրացնում է Գետառ գետը, իսկ մյուս հիմնական մասը չի առաջացնում մակերեսային հոսք, այլ ներծծվում է: Շատ տեղերում ներծծված ջրերը երկրի մակերես են դուրս գալիս քաղցրահամ ջրերի աղբյուրների ձևով: Տարածաշրջանում հարթավայրի և նախալեռների կցվանքատեղում հրաբխային ապարները մերկ են և հաճախ հողածածկույթի

փոխարեն երևում է հզոր ժայռոտ զրահը: Հրաբխային ապարներն իրենց ամբողջ հզորությամբ պարզորոշ երևում են գետերի կանյոններում: Երևանը հյուսիս արևելքից և հյուսիսից գոտևորող Քանաքեռի բարձրունքը և Նորքի բլրազանգվածը տարածաշրջանում ձևավորում են պլատոյաձև սեղանատիպ զանգված, որը 10-150 թեքվածությամբ աստիճանաբար բարձրանում է մինչև 1250մ բարձրություն, ներառելով Ջրվեժ բնակավայրը: Տարածաշրջանն ունի թեք, տեղ-տեղ մեղմաթեք ռելիեֆ, դարավանդային նստվածքներով, մերկացած հրաբխային ապարներով և ժայռերով: Ջրվեժ համայնքը գտնվում է սեյսմիկ միկրոշրջանցման 0,40-0,45g գոտում: Նախատեսվող գործունեության տարածքում սողանքային գոտիներ չկան:

Տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆրակցիաներով:

Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հոդմնահարված, էրոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

Լիթոլոգիական տեսակետից տարածքում կարելի է առանձնացնել հետևյալ երկրաբանական տարբերակները՝

1. Ժամանակակից ալյուվիալ-պրոլյուվիալ գրունտեր, ներկայացված գորշ կավավազով ամուր կազմության, փթաց բույսերի մնացորդներով և արմատներով:

2. Մանրախճային գրունտ մեծաբեկորների պարունակությամբ, ավազային և կավային լցանյութով մինչև 30-35%, քարաբեկորները ներկայացված են հրաբխային ապարներով, կավերի և ավազների ենթաշերտերով և ոսպնյակներով:

3. Մեծաբեկորային գրունտ, խճի և մանրախճի խառնուրդով, քարակտորների արանքները լցված են մինչև 10% կավավազային և ավազային լցանյութով: Քարակտորները ներկայացված են հրաբխային ապարներով:

4. Վերին չորրորդական լճա-ալյուվիալ նստվածքներ ներկայացված խճա-մանրախճային գրունտներով մեծաբեկորների պարունակությամբ, ավազային և կավային լցանյութով մինչև 30-35%, քարաբեկորները ներկայացված են հրաբխային ապարներով, կավերի և ավազների ենթաշերտերով և ոսպնյակներով:

Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքին մասնակցում են գրունտների հետևյալ տարատեսակները՝

- Ժամանակակից ալյուվիալ-պրոլյուվիալ գրունտեր
- Լիցքային գրունտ
- Խոշորա-բեկորային գրունտներ

Տարածքի հիդրոերկրաբանական պայմանները

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքը բարենպաստ է, քանի որ ստորգետնյա ջրերը տեղադրված են մակերեսից 5մ-ից ցածր: Ստորգետնյա ջրերը կապված են միջլավային և լավաների տակ գտնվող հոսքերի հետ, ունեն ինֆիլտրացիոն բնույթ:

2.4 Տարածքի սեյսմիկ բնութագիրը

Հայցվող տարածքի տեղամասի գրունտների հորիզոնական առավելագույն արագացումների և գերակայող պարբերությունների գնահատման համար հիմք է ընդունվել ՀՀՇՆ II-6.02-2006 <<Սեյսմակայուն Շինարարություն Նախագծման Նորմեր>> նորմատիվային փաստաթղթում ներկայացված սեյսմիկ գոտևորման քարտեզը, ըստ որի ուսումնասիրվող տարածքը գտնվում է երրորդ սեյսմիկ գոտու մեջ: Այդ գոտուն համապատասխանում է 0.4g հորիզոնական արագացման արժեքը:

2.5 Հողային ռեսուրսներ

Նախատեսվող գործունեության տարածաշրջանում տարածված են շագանակագույն և կիսաանապատային գորշ հողերը: Շագանակագույն հողերի հողաշերտի հզորությունը միջին հաշվով տատանվում է 30-50 սմ-ի սահմաններում, ռելիեֆի իջվածքային մասերում հաճախ այն հասնում է 65-70 սմ-ի: Ըստ մեխանիկական կազմի այս հողերը դասվում են միջակ և ծանր կավաավազային տարատեսակների շարքին: Կախված ռելիեֆի պայմաններից և էրոզիայի ենթարկվածության աստիճանից՝ հանդիպում են ինչպես ավելի թեթև, այնպես էլ ծանր մեխանիկական կազմով հողեր: Հողերի կլանման տարողությունը համեմատաբար ցածր է, որը պայմանավորված է հումուսի սակավ պարունակությամբ և թեթև կավավազային մեխանիկական կազմով: Շագանակագույն հողերի ծավալային զանգվածը տատանվում է 1.24 գ/սմ³ -ից մինչև 1.48 գ/սմ³ -ի, տեսակարար զանգվածը՝ 2.50 գ/սմ³ -ից մինչև 2.65 գ/սմ³ -ի, խոնավությունը՝ 20-30%-ի սահմաններում: 30 Այս տիպի հողերը պարունակում են մեծ քանակությամբ կարբոնատներ՝ մինչև 10-25%, որն առաջ է բերում հողերի ցեմենտացիա և քարացում: Հողը և փխրուկաբեկորային մայրատեսակը հարուստ են հողալկալի մետաղներով, ֆոսֆորական թթվով և կալիումով: Անմշակ հողերում ստրուկտուրան խոշոր կնձիկային է: Կիսաանապատային գորշ հողերը ձևավորվել են տեղակուտակ, տեղակուտակոդողաբերուկային խճային և խճաբեկորային կարբոնատային մայրտեսակների վրա: Այս հողերն ունեն հիմնականում կավավազային մեխանիկական կազմ, բավականաչափ կմախքային զանգվածի պարունակությամբ: Ստրուկտուրան փոշեհատիկային կամ վառողանման է, ջրակայուն ագրեգատների քանակը չի գերազանցում 30-35%: Առանձին տեղերում հողի խորը շերտերում հաճախ բավական քանակությամբ ջրալույծ աղեր են կուտակվում (մինչև 1-1.5%), որոնք գլխավորապես ներկայացված են CaSO₄, MgSO₄ և այլ աղերի տեսքով:

2.6 Օդային ավազան

Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներն են հանդիսանում կոմունալ կենցաղային օբյեկտների, ջեռուցման գազային անհատական սարքերը և ավտոտրանսպորտը: Համայնքի մթնոլորտային օդի աղտոտվածությունը ներկայումս նորմատիվային մակարդակից ցածր է: ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից:

Օդային ավազանի աղտոտվածության մոնիտորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» (ՇՄՏՄԿ) ՊՈԱԿ-ի կողմից: Հաշվի առնելով այն, որ Զովք բնակավայրում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումները բացակայում են, սույն հայտում բերվում են օդային ավազանի ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքները: ՀՀ բնակավայրերի ազգաբնակչության թվաքանակը ընդունված է համարել ՀՀ-ի ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) 2011 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ վիճակագրական տեղեկագրում բերված տվյալները: Համաձայն ՀՀ ԱՎԾ վիճակագրական տեղեկագրի՝ Զովք բնակավայրի բնակչության թվաքանակը կազմել է 835 մարդ:

Ելնելով նշված թվաքանակից և ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքներից՝ Զովք համայնքում աղտոտիչների ֆոնային կոնցենտրացիաների արժեքները գնահատվում են հետևյալ տիրույթում.

Փոշու մասնիկներ՝ 0,2մգ/մ³,

ածխածնի մոնօքսիդ՝ 0,4 մգ/մ³,

ազոտի երկօքսիդ՝ 0,008 մգ/մ³

ծծմբի երկօքսիդ՝ 0,02 մգ/մ³:

Նշված մակարդակները գտնվում են ՀՀ գործող նորմերի (ՀՀ որոշում 160-Ն, 2006 թ.) սահմանում, բացառություն է կազմում ընդհանուր փոշու մասնիկները, որոնց ֆոնային կոնցենտրացիան մոտ 1.5 անգամ գերազանցում է գործող ՍԹԿ-ն (ՍԹԿփոշի = 0,15 մգ/մ³):

Մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանց



Մթնոլորտային օդի որակի գնահատումը կատարվում է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշմամբ հաստատված աղտոտիչների սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ՍԹԿ) համեմատությամբ: Հիմնական աղտոտիչների ՍԹԿ-ների արժեքները բերված են Հավելված 3-ում:

2021 թվականի ընթացքում մթնոլորտային օդի որակի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Կապան, Քաջարան և Չարենցավան քաղաքներում: Որոշվել են

մթնոլորտային օդում փոշու, փոշու մեջ մետաղների (մոտ 21 մետաղ), ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, և գետնամերձ օզոնի պարունակությունները: Ընդհանուր առմամբ 2021 թվականին կատարվել է մթնոլորտային օդի 36274 նմուշառում, իրականացվել 29324 դիտարկում: Համաձայն իրականացված արդյունքների 2021 թվականին 2020 թվականի համեմատությամբ քաղաքների մթնոլորտային օդում բարձրացել են հետևյալ աղտոտիչների պարունակությունները. Երևան՝ ազոտի երկօքսիդ, ծծմբի երկօքսիդ, փոշի և գետնամերձ օզոն, Գյումրի՝ ազոտի երկօքսիդ, ծծմբի երկօքսիդ և փոշի, Ալավերդի՝ ազոտի երկօքսիդ, Հրազդան՝ ծծմբի երկօքսիդ, Արարատ՝ ծծմբի երկօքսիդ և փոշի, Կապան՝ ազոտի երկօքսիդ:

Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաները հիմնականում գերազանցել են ՍԹԿ-ն: Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը:

Փոշով աղտոտվածության ՍԹԿ-ներից գերազանցումներ դիտվել են նաև Ալավերդի, Վանաձոր և Հրազդան քաղաքներում:

Հայցվող տարածքում մթնոլորտային օդի դիտակետ բացակայում է, ուստի ներկայացվում է ամենամոտ դիտակետի՝ Երևանի տվյալները:

Երևան

Երևան քաղաքում գործում է 45 դիտակետ և 5 դիտակայան: Որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի պարունակությունները: Փոշու որոշ փորձանմուշներում որոշվել են մետաղների պարունակությունը, որոնց ամսական և տարեկան միջին կոնցենտրացիաները բերված են գրաֆիկների տեսքով:

2021թ. քաղաքի մթնոլորտի աղտոտվածությունը (ըստ մթնոլորտն աղտոտող 4 նյութերի) միջինից ցածր մակարդակի է՝ մթնոլորտի աղտոտվածության ցուցանիշը* (ՄԱՅ) 2.14 է (փոշի՝ 1.15, ծծմբի երկօքսիդ՝ 0.34, ազոտի երկօքսիդ՝ 0.61, գետնամերձ

օզոն՝ 0.05):

Վերջին 5 տարիների ընթացքում դիտվել է ծծմբի երկօքսիդի և գետնամերձ օզոնի կոնցենտրացիաների նվազման, իսկ փոշու և ազոտի երկօքսիդի՝ աճման տենդենց* (աղյուսակ 4):

2021 թվականին Երևան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշներից փոշու միջին տարեկան կոնցենտրացիան գերազանցել է համապատասխան ՍԹԿ-ն 1. 1 անգամ: Մնացած ցուցանիշների միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները: Իրականացված դիտարկումների 29%-ում դիտվել են փոշու, 13%-ում՝ ծծմբի երկօքսիդի, 0.4%-ում՝ ազոտի երկօքսիդի, 1%-ում՝

գետնամերձ օգոնի համապատասխան ՍԹԿ-ներից գերազանցումներ, ինչը կարող է պայմանավորված լինել ինչպես բնակլիմայական պայմաններով և աղտոտման աղբյուրներով, այնպես էլ կանաչ տարածքների սակավությամբ: Քաղաքում մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը:

Երևան քաղաքի մթնոլորտային օդի դիտարկումների արդյունքները, 2021թ .

Որոշվող միացություն (դիտակայանի քանակ)	Դիտարկված առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ3 (դիտակայանի համար)	ՍԹԿ-ից գերազանցումների քանակ		Միջին տարեկան կոնցենտրացիա, մգ/մ3	ՍԹԿ միջին օրական, մգ/մ3
		>1 ՍԹԿ	>5 ՍԹԿ		
Ծծմբի երկօքսիդ (5)	0 (դիտ. N7) .059	7	2	0.017	0.05
Ազոտի երկօքսիդ (5)	0 (դիտ. N7) .910	224	9	0.027	0.04
Փոշի (5)	2 (դիտ. N18) .076	505	33	0.172	0.15
Գետնամերձ օգոն (5)	0 (դիտ. N18) .095	10	9	0.005	0.03

2.7 Ջրային ռեսուրսներ

Կոտայքի մարզի տարածքով են հոսում Հրազդան, Մարմարիկ, Մեղրաձոր, Ծաղկաձոր, Դալար, Արջաձոր, ինչպես նաև Գետառ և Ազատ գետերը, որոնք ունեն ոռոգիչ նշանակություն: Ոռոգման համակարգում մեծ նշանակություն ունեն հատկապես Սևաբերդի, Մարմարիկի և Աղբյուրակի ջրամբարները, ինչպես նաև Ակնա լիճը (3032 մ բարձրություն), որով ջրաբեխացվում են ամառային արոտավայրերը: Մարզը հարուստ է քաղցրահամ ջրերի աղբյուրներով (Գառնիի, Կաթնաղբյուրի, Սուլակի, Ալափարսի, Նուռնուսի, Արզականի, Գյումուշի, Մաքրավանի): Մարզում առկա են 440 բնաղբյուրներ և 200-ից ավելի խորքային հորեր: Կոտայքի մարզի քաղաքային և գյուղական բնակավայրերի տարածքներում կան տասնյակ լճեր, որոնց մի մասը չորանում է ամռանը: Կոտայքի մարզի լճերը տնտեսական նշանակություն գրեթե չունեն: Դրանք հիմնականում օգտագործվում են ոռոգման նպատակներով և ունեն տեղական նշանակություն: Մարզի ջրամբարներն

օգտագործվում են ոռոգման, էներգետիկայի, ձկնաբուծական և բուժական նպատակներով: Հայտնի են Մարմարիկի և Աղբյուրակի ջրամբարները:

2.8 Բուսական և կենդանական աշխարհ

Շրջանի բուսական աշխարհը ներկայացված է Գեղամա և Երևանյան ֆլորիստական շրջանների միջև ընկած սահմանային, միջին բարձրության լեռնային տափաստանային զոնայի տարածքներին բնորոշ բուսականության տեսակներով, որոնցում գերակշռում են հատիկավոր և հատիկատարազգի ներկայացուցիչները: Աճում են նաև օշինդրա-էֆեմերային տեսակներ՝ *Artemisia Fragens Willd.*, *Kochia Prostrata (L.) Schrad.*, *Capparis spinosa Willd.*, *Ceratoides papposa Botsch. Et Ikonn.*, *Atraphaxis spinosa L.*, *Rhamnus pallasii Fisch. Et Mey.*, *Tanacetum argyrophyllum (C.Koch) Tzvel.*, *Poa bulbosa L.* *Bromus*, *Aegilops*, *Eremopyrum*, *Alyssum*, *Aeluropus littroralis (Gouan) Parl.*:

Շրջանում հաճախ հանդիպող բուսական տեսակներն են.

1. Արեղախոտ քիստաբաժակ - *Stachys atherocalyx*
2. Անթառամ կարմրավուն- *Helichrysum rubicundum*
3. Աովույտ ցանովի - *Medicago sativa*
4. Աստղազազար արևելյան - *Astrodaucus orientalis*
5. Ավելաբույս գետնատարած - *Kochia prostrata*
6. Ավելուկ գանգուր- *Rumex crispus*
7. Ավելուկ պալարավոր- *Rumex tuberosus*
8. Ավելուկ վահանաձև - *Rumex scutatus*
9. Արձճախոտ եվրոպական - *Plumbago europaea*
10. Բալենի ալեհեր - *Cerasus incana*
11. Բալենի մահալեբի - *Cerasus mahaleb*
12. Բավեղ արևելյան - *Phlomis orientalis*
13. Բարդի սև - *Populus nigra*
14. Բարդի նրբագեղ - *Populus gracilis*
15. Բերենիկե արևելյան- *Veronica orientalis* և այլն:

Շրջանում տարածված են միջին բարձրության լեռնային տափաստաններին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ: Կաթնասունները առավել կերպով ներկայացված են կրծողներով, որոնց մի

մասը վարում է ստորգետնյա կենսակերպ: Բազմազան է թռչնաշխարհը, հանդիպում են սպիտակախածի կեռնեխ, լեռնային խաղտտիկ և կիսասպիտակավիզ ճանճորս: Բազմաթիվ տեսակներով ներկայացված են մորեխները (սովորական իտալական մորեխ, ձիուկ, մթնաթև, ծղրիդ): Լայն տարածված են բզեզները և թիթեռները (շաղգամ, կաղամբի ճերմակաթիթեռ): Սողունների և երկկենցաղների ֆաունան աղքատիկ է: Երկկենցաղներից տարածքում հնարավոր է հանդիպել միայն Կանաչ դոդոշի (*Bufo viridis*):

Նկարագրվող տարածքում տարածված են միջին բարձրության լեռնային տափաստաններին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ: Այս լանդշաֆտային գոնայում տարածված են 113 տեսակ ողնաշարավոր կենդանիներ: Կաթնասունները առավել կերպով ներկայացված են կրծողներով, որոնց մի մասը վարում է ստորգետնյա կենսակերպ:

Ընդհանուր առմամբ տարածաշրջանում հայտնի են ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված հետևյալ տեսակները.

- ականթ դիոսկորեանման – կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է, հայտնի է մեկ պոպուլյացիա, որը աճում է Հատիս լեռան ստորոտում,

- ձագախոտ էգինյան – վտանգված տեսակ է, լոկալիտներից մեկը գտնվում է Զառ գյուղի մոտ,

- գառնառվույտ լազիստանյան – վտանգված տեսակ է, լոկալիտներից մեկը գտնվում է Հատիս գյուղի մոտ

ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակների հայցվող տեղամասի տարածաշրջանում հատնի են.

- տոնական գնայուկ, նեղ սևամարմին և հայկական սևամարմին – հազվագյուտ տեսակներ են, հայտնաբերված է Զրվեժ գյուղի մոտ,

- ալեքսանոր առագաստաթիթեռ և ավրորինա դեղնաթիթեռ – խոցելի տեսակներ են, հայտնաբերված է Զրվեժ գյուղի մոտ,

Հայցվող տարածքում պատմամշակութային և հատուկ պահպանվող տարածքներ չկան:

ՀՀ Կոտայքի մարզի բնության հուշարձանների ցանկը՝ համաձայն ՀՀ կառավարության 14 օգոստոսի 2008 թվականի N 967-Ն որոշման՝

Երկրաբանական հուշարձաններ՝

31.	«Անանուն» խզվածքներ	Կոտայքի մարզ, Եղվարդ ավանից հվ, ավազահանքի մոտ
32.	Թագավորանիստ խարամային կոնի պեմզաների և խարամների կոնտակտ	Կոտայքի մարզ, Եղվարդ քաղաքից 3.5 կմ դեպի հարավ

33.	«Թագավորանիստ» խարամային կոն	Կոտայքի մարզ, Եղվարդ ավանից 3 կմ հվ, Աշտարակ տանող խճուղու ձախ կողմում
34.	«Պեռլիտե փիղ» քարե քանդակ	Կոտայքի մարզ, Չարենցավան քաղաքից 2 կմ հվ, քարահանքի մոտ
35.	«Անանուն» բյուրեղային թերթաքարերի ու վերին կավձի կրաքարերի կոնտակտ	Կոտայքի մարզ, Բջնի գյուղի արևմտյան ծայրամասում
36.	«Ծակ քար» բնական թունել	Կոտայքի մարզ, Բջնի գյուղի մատույցներում, Հրազդան գետի ձախ ափին
37.	«Բազալտե երգեհոն» սյունածև բազալտներ	Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
38.	«Անանուն» քարայր սյունածև բազալտներում	Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1,0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
39.	«Անանուն» լանջային էրոզիա	Կոտայքի մարզ, Ազատ գետի աջակողմյան ափերին
40.	«Անանուն» լավային ծալքեր	Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
41.	«Անանուն» խորշեր	Կոտայքի մարզ, Գողթ գյուղից մոտ 3.0 կմ հս-արլ
42.	«Հատիս» հրաբուխ	Կոտայքի մարզ, Զովաշեն գյուղից 2.0 կմ արմ
43.	«Ավազան» հրաբխային գմբեթ	Կոտայքի մարզ, Կարենիս (Գյումուշ) գյուղից 1.5 կմ հս-արլ
44.	«Գյումուշ» հրաբխային գմբեթ	Կոտայքի մարզ, Կարենիս (Գյումուշ) գյուղից 0.5 կմ հս-արլ
45.	«Անանուն» ապարների բնորոշ մերկացում	Կոտայքի մարզ, Նուռնուս գյուղի և Գյումուշ ՀԷԿ-ի միջև
46.	«Անանուն» օբսիդիանի ելքեր	Կոտայքի մարզ, Ջրաբեր գյուղից մոտ 1.5 կմ հս-արմ, Երևան-Սևան խճուղու աջ կողմում
47.	«Անանուն» քարե կուտակումներ	Կոտայքի մարզ, Քաղսի գյուղի հվ-արմ եզրին, Հրազդանի կիրճում
48.	«Գութանասար» հրաբուխ	Կոտայքի մարզ, Ֆանտան գյուղից 3 կմ հվ
49.	«Լեռնահովիտ» քարային կուտակումներ	Կոտայքի մարզ, Ֆանտան գյուղից 4-5 կմ հվ-արլ, «Թեզխարաբ» գյուղատեղիի մոտ
50.	«Ձորաղբյուրի» (Մանգյուսի) բրածո ֆլորա	Կոտայքի մարզ, գյուղ Ձորաղբյուր

Ջրաերկրաբանական հուշարձաններ

11.	«Հաղարտանք» աղբյուր	Կոտայքի մարզ, Հրազդան քաղաքի Վանատուր (Աթարբեկյան) թաղամասի արլ ծայրամասում, 1.5 կմ հս-արմ, ծ.մ-ից 1755 մ բարձրության վրա
12.	«Համով» աղբյուր	Կոտայքի մարզ, Ակունք գյուղի հվ-արմ ծայրամասում, եկեղեցու մոտ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա
13.	«Քաղցր» աղբյուր	Կոտայքի մարզ, Արզնի գյուղից 150 մ հվ-արմ, Հրազդան գետի ձախ ափին, ծ.մ-ից 1300 մ բարձրության վրա
14.	«Ձորի» աղբյուր	Կոտայքի մարզ, Գողթ գյուղից 0.3 կմ հս-արլ, Գողթ գետի աջ ափին, ծ.մ-ից 1580 մ բարձրության վրա
15.	«Աուզի» աղբյուր	Կոտայքի մարզ, Կաթնաղբյուր գյուղից 0.3 կմ հս-արլ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա

Ջրագրական հուշարձաններ

7.	«Ղազ» լիճ	Կոտայքի մարզ, Գեղարդ գյուղից մոտ 4 կմ հս
8.	«Վիշապա» լիճ	Կոտայքի մարզ, Գեղարդ գյուղից մոտ 4 կմ արլ
9.	«Բիշար» լիճ	Կոտայքի մարզ, Սարաբերդ (Սևաբերդ) գյուղից մոտ 3 կմ հս
10.	«Ջեյնալ» լիճ	Կոտայքի մարզ, Սարաբերդ (Սևաբերդ) գյուղից մոտ 7 կմ հս-արլ

Բնապատմական հուշարձաններ

6.	«Ողջաբերդ» բնապատմական համալիր	Կոտայքի մարզ, Ողջաբերդ գյուղի հս-արլ մասում
----	--------------------------------	---

Նախատեսվում է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի 438 որոշման 43-րդ կետի որոշման պահանջներով՝ մասնավորապես՝ <<Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմին>>:

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական, առողջապահական նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Շին. հրապարակը կազմակերպելիս անհրաժեշտ է ղեկավարվել շինարարական աշխատանքների կազմակերպման նախագծով և հակահրդեհային անվտանգության վարչության կողմից հաստատված դրույթներով: Շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

3. 1 Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

3. 2 Արտանետումների աղբյուրները

Ավտոգազալիցքավորման բազմավառելիքային կայանի կառուցման շինարարական աշխատանքների ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնք ներառում են՝

- փոշու արտանետումներ՝ հիմքերի փորման ընթացքում
- դիզելային վառելիքի արտանետումներ՝ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

3. 3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագիրը

3. 3. 1 Մթնոլորտային օդ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /հողային աշխատանքներ/ ընթացքում ջրցանի իրականացում,
- շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի պարբերաար ստուգում և կարգավորում,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխում փակ ծածկով մեքենաներով.
- սորուն նյութերի պահեստների ծածկում համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

3. 3. 2 Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ☐ ջրցանի ծավալները հաշվարկել այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- ☐ տարածքի հոսքերը /անձրևաջրեր, շինհրապարակից հեռացվող հոսքաջրեր/ միավորել մեկ բակային ցանցում և միացնել հեղեղային ջրատարին:
- ☐ շինարարական հրապարակում այլ բնույթի հոսքեր չեն առաջանալու, անձրևաջրերի հեռացումն իրականացվելու է տարածքում գոյություն ունեցող սելավատարների միջոցով:

3. 3. 3 Հողային ռեսուրսներ

Քանի որ կառուցապատման ենթակա տարածքն արդեն իսկ կառուցապատված է, տարածքում հողային ռեսուրսների պահպանման և հողաբուսաշերտի պահեստավորման միջոցառումներ չեն նախատեսվում:

Շրջակա տարածքների հողային ծածկույթի պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը տեղադրել բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է շինարարական ապահովել սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- Աշխատանքների ավարտից հետո բոլոր տարածքները մաքրել շինարարական աղբից և թափոններից, առաջացած թափոնները տեղափոխել տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- Շինարարության ընթացքում առաջացող շինարարական աղբը 50իսմ քանակով կպահվի պոլիէթիլենային պարկերում հարթակի վրա և շինարարական աշխատանքների ավարտից հետո կտեղափոխվի համայնքի ղեկավարի կողմից հատկացված վայր:
- Շինարարական աշխատանքների ավարտից հետո խախտված տարածքները բարեկարգել և բերել նախնական տեսքի:

3.3.4 Թափոնների առաջացում և կառավարում

Շինարարական աշխատանքների ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածակագիրը՝ 9120040001004/՝ 1տ՝ վտանգավորության 4-րդ դաս, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, և 50 իսմ շինարարական աղբը /ծածակագիրը՝ 9120060101004/ վտանգավորության 4-րդ դաս, ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից շինթույլտվությամբ հատկացված վայր:

Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.

- ☐ շինարարական աշխատանքների ընթացքում շինարարական հրապարակը և հարակից տարածքը գերծ է պահվելու թափոնների կուտակումներից, Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման (ՏՏԵԶ) ծրագիր:
- ☐ շինարարական հրապարակում առանձնացվելու է շինարարական և կենցաղային աղբի նախնական կուտակման վայրը,
- ☐ շինարարական թափոնները հնարավորինս կտեսակավորվեն/կառանձնացվեն մետաղները, փայտերը և այն ամենը ինչը

հնարավոր կլինի վերաօգտագործել շինարարական աշխատանքների ընթացքում և մնացած մասը կտեղափոխվի հատկացված վայր,

☐ շինարարության ընթացքում կենցաղային աղբը հավաքվելու է համայնքային աղբահավաք տարողությունների մեջ,

☐ բացառվելու է կենցաղային աղբի այրումը,

☐ շինաղբի և քանդված հանված հողային զանգվածների տեղափոխումը դեպի հատկացված վայր կատարվելու է փակ ծածկ ունեցող բեռնատարներով,

☐ շինաղբի և քանդված հանված հողային զանգվածների տեղափոխումն իրականացվելու է տեղական ինքնակառավարման մարմինների հետ համաձայնեցված վայր:

☐ բացառվելու է աղբի նախնական կուտակումը շինհրապարակից դուրս՝ այլ բնակելի և հասարակական տարածքներում,

☐ շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում՝ տարածքից հեռացնելով բոլոր տեսակի շինարարական նյութերի մնացորդները:

Շահագործման փուլում գազալցակայանում կենցաղային թափոնների հեռացման համար տարածքում կտեղադրվեն աղբամաններ, որտեղ կուտակված կենցաղային աղբը կանոնավոր կերպով (ամենաուշն երկու օրը մեկ) վարչական շրջանի կամ աղբահանող ընկերության հետ կնքվող պայմանագրային հիմունքներով կհեռացվի հանրային աղբավայր:

Շինարարական աշխատանքների ընթացքում քսայուղերի, հեղուկ վառելիքի հնարավոր մնացորդային քանակների առաջացման իրավիճակում /որոնց քանակը կարող է կազմել առավելագույնը 30 լ/շին.ժամանակահատվածում և հանդիսանում են վտանգավորության III դասի թափոններ/ նախատեսվում է նշված նյութերը պահել հատուկ անթափանց և փակ տարաներում (ավազե, մետաղական կամ բետոնե) հիմքերի վրա, ինչը կբացառի վերջիններիս արտահոսքով պայմանավորված հողային համակարգերի վրա հնարավոր աղտոտման ռիսկերը: Նշված նյութերը որպես երկրորդային նյութ կվերաօգտագործվեն շինարար կապալառուի կողմից այլ աշխատանքներում, կամ կհանձնվեն նշված թափոնները մշակող լիցենզավորված կազմակերպություններին:

3. 3. 5 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- ☐ Հրդեհի առաջացումը
- ☐ Հեղուկ նյութերի արտահոսքը
- ☐ Աշխատողների վնասվածքները
- ☐ Շահագործվող տեխնիկայի հետ կապված վթարները:

Հնարավոր արտակարգ իրավիճակներից և վերոնշյալ ռիսկերից խուսափելու նպատակով շինարարական տեղամասում պարբերաբար կիրականացվեն հետևյալ միջոցառումները.

- Մինչ աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները՝ այդ թվում նաև վարորդները, հրահանգավորվելու են ըստ աշխատանքի անվտանգության կանոնների, ինչը պատշաճ եղանակով գրանցվելու է անվտանգության վարման գրանցամատյանում:

- Շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվելու են հրդեհաշիջման առաջնային միջոցներով, առաջին բուժօգնության դեղատոմսով, իսկ աշխատողներն անցնելու են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում/պատրաստվածություն:

- Բանվորական և ղեկավար կազմը ապահովվելու է սեզոնային արտահագուստով, անվտանգության սաղավարտով և այլ պաշտպանիչ միջոցներով:

- Հեղուկ նյութերը և քսայուղերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

- Շինարարական մեքենաների վառելիքի լիցքավորումը և քսայուղերի հետ առնչվող բոլոր գործողությունները կիրականացվեն հատուկ մասնագիտացված կենտրոններում:

- Հնարավոր վնասվածքների, պատահարների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, իսկ անհրաժեշտության դեպքում կտեղափոխվի բժշկական հաստատությունը:

- Շինարարական հարթակում կապահովվի արտակարգ իրավիճակների վարման մատյան, որը շինարար կապալառուն պարտավոր կլինի պատշաճ մակարդակով վարել:

- Շինարարական հրապարակում կապահովվեն արտակարգ իրավիճակների մասին պատմող և արձագանքման քայլերը լուսաբանող պաստառներ/պլակատներ:

- Խտացված գազով բալոնը տեղափոխել միայն հատուկ պատգարակի միջոցով: Չի կարելի բալոնին մոտենալ յուղոտված հագուստով, արգելվում է գազոգեներատորի մոտակայքում ծխելը:

- Եռակցման աշխատանքներ իրականացնելու ժամանակ հետևել, որ էլեկտրա և գազաեռակցված սարքերը գտնվեն ճանապարհներից և անցումներից մի կողմ և էլեկտրաեռացման սարքը և եռակցվող նյութը լինեն հողանցված:

Նշված միջոցառումների պատշաճ մակարդակով ապահովման դեպքում, հնարավոր կլինի նվազագույնի հասցնել արտակարգ իրավիճակների ռիսկերը, իսկ

առաջացման դեպքում հնարավոր կլինի ձեռնարկել արագ և արդյունավետ հակազդման միջոցառումներ:

3. 3. 6 Աշխատանքի անվտանգություն և առողջություն

Շինարարական աշխատանքների ընթացքում կարևորվում է ղեկավարվել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում կարևորվում է ստորև բերված աշխատողների անվտանգության ապահովման և հակահրդեհային միջոցառումների ապահովումը, մասնավորապես.

- Նախքան աշխատանքի սկսելը կկատարվի շինհրապարակի ժամանակավոր ցանկապատում և կտեղադրվեն մուտքը արգելող ցուցափեղկեր/նշաններ:

- Հակահրդեհային անվտանգությունը շինհրապարակում, աշխատատեղում և աշխատանքի տեղամասերում անհրաժեշտ է ապահովել համապատասխան «Հակահրդեհային անվտանգության կանոններ» պահանջներին համապատասխան, ապահովել կրակմարիչի առկայությունը և հրդեհային անվտանգության վերաբերյալ պաստառներն այլն:

- Շինարարության ընթացքում աշխատողներին պետք է հրահանգավորել անվտանգության տեխնիկայի մասին: Բանվորների աշխատանքների պաշտպանությունը պետք է ապահովվի վարչակազմի կողմից, նրանց անհատական պաշտպանական միջոցներ տրամադրմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ, սաղավարտ և այլն):

- Եռակցման աշխատանքներ իրականացնելիս անհրաժեշտ է հետևել, որպեսզի էլեկտրա և գազաեռակցված սարքերը գտնվեն ճանապարհներից և անցումներից մի կողմ և էլեկտրաեռացման սարքը և եռակցվող նյութը լինեն հողանցված:

- Խտացված գազով բալոնները պետք է տեղափոխել միայն հատուկ պատգարակի միջոցով: Բալոնին չի թույլատրվում մոտենալ յուրոտված հագուստով, արգելվում է նաև բալոնների մոտակայքում ծխելը:

3. 3. 7 Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների դեպքում արտանետումների կարգավորմանը ուղղված միջոցառումներ

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ընթացքում հնարավոր են վնասակար նյութերի մերձգետնյա կոնցենտրացիաների ավելացումներ:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագության նվազեցում, անհողմություն, մառախուղ) մասին հաղորդագրություն ստանալուց հետո կատարվում են հետևյալ գործողությունները (միջոցառումները),

- I կարգի վտանգի (զգուշացման) ժամանակ խստացվում է արտադրական գործընթացների ցուցանիշների և ռեժիմի վերահսկողությունը,
- II կարգի վտանգի ժամանակ դադարեցվում է գազալցումը:

3.3.8 Հակահրդեհային միջոցառումներ

Շինարարական աշխատանքների ժամանակ անհրաժեշտ է՝

- մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջոցառումների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջոցառումները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

- հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

- շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

ԱԳԼՃԿ-ում նախատեսված հրդեհի ազդարարման համակարգը ներառում է՝ 1 հատ հակահրդեհային վահանակ և 1 հատ վահանակի տուփ, 1 հատ տրանսֆորմատոր, ծխի ազդասարք 12 հատ, ջերմային ազդասարք 2 հատ, լուսաձայնային ազդարար 3 հատ, ձեռքի ղեկավարման ազդասարք: Հակահրդեհային նպատակով նախատեսված է՝ փոշային և փրփրային կրակմարիչ և ասբեստային ծածկոց:

Էլեկտրաանվտանգության ապահովման հիմնական միջոց է հանդիսանում հողանցման համակարգը:

Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների և առողջապահական ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել:

3.3.9 Աղմուկի և թրթռումների ազդեցություն

Ներկայացվող տեղանքում աղմուկի աղբյուր կարող են հանդիսանալ միայն ավտոտրանսպորտային միջոցները, սակայն, քանի որ դրանց երթևեկության ինտենսիվությունը բարձր չէ, կարելի է ենթադրել, որ աղմուկի մակարդակը նույնպես բարձր չէ:

ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԳԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 սանիտարական նորմերով:

Հաշվի առնելով որ գազացրակայանը բնակելի տարածքներից գտնվում է զգալի հեռավորության վրա, ինչպես շինարարության, այնպես էլ շահագործման փուլերում աղմուկի մակարդակը զգալի չէ և չի գերազանցի սանիտարական նորմերը: Շինարարության ընթացքում որպես կարևորագույն միջոցառումներ, անհրաժեշտ է՝

- Խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն կլանիչների հարևանությամբ, ինչպիսիք են՝ բնակելի տները, այլ հասարակական շենքերը;

- Աղմկահարույց աշխատանքները հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:

- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:

- Բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը;
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական գործընթացին ներգրավել ժամանակակից տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- շինարարական աշխատանքների, ինչպես նաև շահագործման ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը նախատեսվում է ծածկվել:

3.3.10 Բուսական աշխարհի պահպանության միջոցառումներ

Անհետացման վտանգի տակ գտնվող, հազվագյուտ, պահպանության կարիք ունեցող բուսատեսակներին վնաս չի հասցվի, քանի որ նախատեսվող գործունեությունը իրականացվելու է ճանապարհին կից հատվածում, որը երկար տարիների ընթացքում արդեն իսկ ենթարկվել է անտրոպոգեն ազդեցությունների և որտեղ կենսաբազմազանությունը գրեթե բացակայում է :

Տարածքում հողի բերրի շերտը բացակայում է:

- Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի մաքրում աղբից, կեղտոտված բնահողից, վառելիքաքսուկային նյութերից: Շինարարական աղբը և մնացած թափոնները տեղափոխվելու են տեղական մարմինների կողմից հատկացված աղբավայրեր: Այդ նպատակով մինչև

գործունեության սկսելը համայնքապետին կներկայացվի համապատասխան հայտ, կհամաձայնացվի աղբի և ավելացած գրունտի տեղափոխման վայրերը:

- Կանաչապատումը կիրականացվի առաջնորդվելով ՀՀ կառավարության 2018թ փետրվարի 8-ի N 108-Ն որոշման դրույթներով:

3.3.11 Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ

Հայցվող տարածքում կենդանիների բներ կամ բնադրավայրեր առկա չեն: Առկա կենդանատեսակներն էլ շինարարական աշխատանքների ժամանակ կտեղափոխվեն հարակից տարածքներ:

Կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով ամենաինտենսիվ շինարարական աշխատանքները կիրականացվեն ձվադրման և բնադրման ժամանակաշրջանից (ապրիլ-մայիս) դուրս: Ընդհանուր առմամբ, շինարարական աշխատանքները կկրեն լոկալ և ժամանակավոր բնույթ, ինչի շնորհիվ կենդանիներին հասցվող վնասը կլինի նվազագույն: Շինարարական աշխատանքների բնույթը և մասշտաբը այնպիսին են, որ նրանք իրենց փոքրածավալության պատճառով չեն կարող արգելել կենդանական աշխարհի ներկայացուցիչների սեզոնային միգրացիայի կամ ջուր խմելու ճանապարհները:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախագգուշացումներ և աշխատողների անվտանգություն	(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախագգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ (b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել (c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա: (d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) (e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	(a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար՝ Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով (b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով (c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի:
	Աղմուկ	(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում (b) Շինարարական աշխատանքների, ինչպես նաև շահագործման ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է

		ծածկվեն:
	Թափոնների կառավարում	(a) Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար: (b) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: (c) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից (d) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով՝ նախատեսվածին համապատասխան
Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ	(a) Շինարարական անձնակազմը կօգտվի գոյություն ունեցող կենցաղային միջոցներից, կոյուղաջրերի հեռացումը շինհրապարակից պետք է իրականացվի անջրթափանց սեպտիկ հոր, (b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն համայնքում գործող մասնագիտացված կետերում:
Հետիոտների և երթևեկության ապահովություն	Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ	(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով. ▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ ▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության զոնայում: ▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի

		ժամերին: ▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար. ▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում:
Կենսաբազմազանության պահպանում	Շինարարական աշխատանքների հետևանքով կենդանական և բուսական աշխարհի վտանգներ	☐ շինարարության ընթացքում տարածքի բուսահողը հանվելու և կույտավորվելու է պաշտպանված վայրերում, հետագայում այն օգտագործվելու է տեղանքի բարեկարգման համար, ☐ ապահովվելու են անհրաժեշտ պայմաններ, որպեսզի հանված բուսահողը չխառնվի գրունտի հետ և չաղտոտվի , ☐ ջրային և հողմնային հողատարումից զերծ պահելու համար պահեստավորված հողաթմբերը ծածկվում են խոտաբույսերով կամ իրականացվում են այլ միջոցառումներ՝ հողաթմբերի ամրացում, ծածկում և այլն: ☐ բուսահողի պահեստավորման համար ընտրվելու է շինարարական հրապարակից դուրս տեղակայված վայր: ☐ շինարարության ավարտից հետո հանված բուսահողը օգտագործվելու է տարածքի կանաչապատման նպատակով: ☐ կառուցապատումից ազատ տարածքում նախատեսվում է իրականացնել կանաչապատում համաձայն կանաչապատման նախագծի: ☐ Կանաչապատումը կիրականացվի առաջնորդվելով ՀՀ կառավարության 2018թ փետրվարի 8-ի N 108-Ն որոշման դրույթներով: ☐ շինարարական աշխատանքները կիրականացվեն ձվադրման և բնադրման ժամանակաշրջանից (ապրիլ-մայիս) դուրս:

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆՐԻ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակարարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	- Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ - Բնահողով, շին աղբով բարձված մեքենաների թափքը պետք է թրջել և ծածկել պոլիէթիլենային թաղանթներով, թույլ չտալով փոշու ամպի գոյացություններ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում	Շինհրապարակ Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս Երևան քաղաքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Հողային աշխատանքներ	- Հանված հողային գրունտները պահեստավորում են թույլատրված վայրում - Անհրաժեշտության դեպքում ետլիցք, ավելցուկի օգտագործում տարածքի	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Կապալառու

	բարեկարգման նպատակով				
Կենսաբազմազանություն	Բուսատեսակների, դրանց աճելավայրերի և պոպուլյացիաների վիճակի փոփոխության մշտադիտարկում	Գործունեության ենթակա տարածք	Արտաքին զննում, դաշտային հետազոտություններ	Շինարարության փուլում	Կապալառու
Իներտ շինանյութերի գնում	Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Իներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին զննում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, համայնքապետարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու
Շինհրապարակի վերականգնում, կանաչապատում և Տարածքի բարեկարգում	-Շինհրապարակը մաքրված է, նյութերը և թափոնները հեռացված են, - բոլոր մակերեսները, այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են, - շինհրապարակի տարածքը բարեկարգված և կանաչապատված է, ապահովված է թփերի, սիզամարգերի և այլ բուսականության նորմալ աճը	Տեղամասեր Կատարած Ստուգայցեր Կանաչապատվող բոլոր տեղամասերը	Շինհրապարակի զննում Ստուգայցեր	Շինարարության ավարտին Շինարարության ավարտից սկսած մինչև բուսականության, աճի, կաշոդականության ապահովումը	Կապալառու Կապալառու

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մթնոլորտային արտանետումների գնդաձրման ձեռնարկ, ЕМЕР/ЕЕА, 2009:
2. СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
3. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
4. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
5. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
6. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
7. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
8. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР, Москва 1984г.
9. ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի "Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշում:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ